




Հոգս Արհարչս

ԱՌԵՎԻ
ՈՒԺԸ

ՀԱՆՔ ՊԵՏՅՈՎՅԱՆ

891.99

7-89



ԱՐԱՄ ԳԻՐԳՈՐՅԱՆ

01 JAN 2009
19 NOV 2011

891.99
9-89 *պ*

ԱՐԵՎԻ ՈՒԺԸ

ԱՅՍ ԳԻՐԲԸ ԴՎԻՐՈՒՄ ԵՄ ԼԵՆԻՆ-ՍՏԱՆԻՆԻ
ՊԱՆԴԱԼԻ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ 18-րդ ՀԱՂԹԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ:

ՀԵՂԻՆԱԿ

Գ Ի Տ Լ Բ Ս

25.03.2013

26121

Պատմական հիմնադրամ Զ. ՄԵԼԻՔԻՅԱՆ
Տեխնոլոգիա Զ. ՄԿՐՏԶՅԱՆ
Շապիկյան Գևորգ Բ. Երանյան
Արքայազն Զ. Մանուկյան
Լիմառիպիտ Գ. Կարնիկյան
Ե. Կապ Գ. Մանուկյան
Տպագրիչ Լ. Ավագյան



3919
39

Դիմվելի տիպար № 10930
Լեհիմականի տեղադրի տպարան
Պատվեր № 540: Տիրում 4.000 ար.

Այսպես յեղով, վոր Հրանուշի հայրը՝ հայտնի վաճառական Մալումյանը, կանչեց Գուրգեն Սինանյանին և իր ձեռքով աղջկան հանձնեց նրան:

— Ահա՛, — ժպտալով ասաց վաճառականը, — զեղ դուլում են, վորդին անվանի քանդակադործի, նայիր աղջկա և կերտիր նրա պատկերը:

Մալումյանը հրճվալից աչքերով նայեց աղջկան և թանգարժեք տարանք ունեցողի հպարտությամբ ավելացրեց. — Հա՛, ուրեմն քանդակիր նրա արձանը և լավ քանդակիր:

Աղան փոքր ինչ լոեց, փափլիկ ձեռքով շինեց սեղանի վրա բեխերը և կարծես, թե կարևոր մի բան մտածելով դարձավ, նայեց կողքին նստած իր կնոջը և միայն նրան լսելի ձայնով ասաց. — Թող իմանան, վոր անդլիպոց թանկ մահուդից, ամենալիբը խանութներից և պարսիկների ծաղկավոր խալիչաններից ու բազմաթիվ աներից բացի, յես աղա Մալումյանս, անգին մի գանձ ել ունեմ, գեղեցկուհիների գեղեցկուհին ինձ մոտ ե:

Մալումյանը ժպտում էր, ծնկին խաչած մատները վրա տիրոջ պես սառն ու ինքնազուս վայելում էյին թանկարժեք մատանիների հազվադուր քարերը:

Յեվրոպա և ուրիշ շատ յերկրներ չըջած աղան, ինքն իրեն, լուրյային, մտածում էր. — ահա թե ինչ, աղջիկս ուզում եմ մարդու տալ, աղա Արեւովը աչք ե դրել՝ իր տղայի համար: Մակայն թող կանգնի նրա արձանը, թող նայի աշխարհը, կանսնենք — ով ե ավելի արժանավոր, յես սխալվողը չեմ...

Մալումյանի ներքեվի չըթուները փոքր ինչ դուրս եր ընկած: Նա այդպես եր անում մեկ ել այն ժամանակ, յերբ քաշում եր համարիչի հատիկները և հաշվում որովա առեկտրի շահույթը:

Վաճառականը դուրսը բարձրացրեց և նայելով քանդակադործին հարցրեց — քանդակը պետք ե, վոր լավը լինի, նմանը չգտնվի, հը՛, կարո՞ղ ես:

Սինանյանը, վոր սպասում էր, փոքր ինչ լոեց և վստահ ասաց. — կարող եմ, այո:

Մալումյանը հենվեց գահավորակին և պայմանը կապած համաբերով, վերջացրեց, — դե, զեղ տեսնեմ, վաղվանից սկսիր: Քանդակադործը դուրս գնաց, Մալումյանը վերցրեց նարդիլին, մանուկների մեջ ջուրը յնուց, փրփուր կուտակեց, իսկ աղան խաղում:

եր ժամացույցի վրակյա, մատնաչափ չղթացի հետ և քաշում եր նար-
գիլին:

Աղայի սենյակի պատերը ծածկված էին պարսկական թանկարժեք
գորգերով, դիմացի գորգի վրա յերեվում եր հուսախափ վորսորդը,
վորը հեռուում եր մշուշի մեջ կորած յեղնիկին:

Աղան ժպտում եր, հպարտ, ինքնազոհ և յեռանդով շփում վրակյա
չղթան:

Յեվ իրոք, նա իրավունք ուներ հպարտանալու իր օղջկանով:

* * *

Այսպիսով Հրանուշն ու Սինանյանը դառն իրար:

Այն օրից, ինչ հայրը հայտնել եր, թե ուզում ե իրեն մալու-
տալ, Հրանուշի գեղեցիկ գեմքը, արեվից զրկված ծաղկի նման խամ-
բում եր, իսկ յերբ իմացավ, վոր հայրն ուզում ե իր արձանը պատ-
րաստել առյ՛ ռւրախությանը չափ ու սահման չկար:

Նա դիմեց ամեն միջոցի, վորպեսզի արձանը պարտաստողը լինեք
Գուրգենը, վորի հետ կապված եր սիրով և գիտեր, վոր հայրն իրեն
հեշտությամբ նրան տալ չեր կարող:

Աղա Մալումյանն այս ամենից անտեղյակ՝ համաձայնեց օղջկան
ու քանդակադործին թողնել առանձին:

Բախտը ժպտում եր սիրահարներին, քանդակադործը գեղեցիկ-
հուն զրկեց այնպես, ինչպես արեվի ճառագայթները ծաղկի փարթա-
մորեն բացված բաժակը:

Նրանք յերգվեցին չղավաճանել, յեթե անգամ, արեւ մոտանա հ-
ղազնդին...

Նրանց թվում եր, թե Հրանուշի հայրը կանգնելով փաստի առաջ,
միաբը կփոխի և կհամաձայնի օղջկան տալ քանդակադործին:

Ամիսներ անցան:

Արձանն արդեն պատրաստ եր. դա մի հրաշալիք եր, վորի հետ
կարող եր համեմատվել միայն արձանի տերը:

Հրանուշի փոքրիկ շնիկը տեսնելով արձանը, ճանաչեց տիրո-
հուն, թափահարեց պոչը, առաջ սողաց, ընկավ վրաները և սարսա-
փած յետ փախավ. նա, կենդանու բնազդով, զգաց արձանի սառնու-
թյունն ու անտարբերությունը:

Արձանն ամենքի հիացմունքի պատճառն եր:

Բոլորն ել միաբերան աչքում եյին յերիտասարդ քանդակադործի
սրտակարգ տաղանդի տեր լինելը:

Սինանյանը, գործն ավարտելուն պես, պետք ե հեռանալ Մա-
լումյանի տնից, բայց անսպասելի կերպով հայտարարեց, վոր Հրա-
նուշը և ինքը մի քանի ամիս ե արդեն ինչ ամուսնացած են, և վոր վոչ
վոք՝ վոչ յերկնքի և վոչ ել յերկրի ուժերը նրանց բաժանել չեն կա-
րող:

Քանդակադործը կրկնում եր այն խոսքերը, ինչ նախորոք, վորոչեւ
եյին ինքն ու Հրանուշը:

Վաճառականը մի քանի րոպե լուռ մնաց:

Անսպասելի հայտարարությունը նրան չփոթեցրեց, սակայն շան-
ցած ժամանակ, նա տիրապետեց իրեն և կատարեց:

Մալումյանը զայրույթով խիեց ծնկներին, իսկ աչքերը մշուշվե-
ցին, մտածում եր, թե օղջկան Սրբելովի վորդուն տալով ինչքան փող
պիտի ստանար և վորպիսի ճոխության մեջ պիտի ապրեր Հրանու-
շը:

Այնպես, վոր անսպասելի լուրը աղայի վրա գործեց ցնցող տպա-
վորություն:

Սակայն փորձված այդ մարդն արդեն տիրապետել եր իրեն:

Նա դառնորեն ասաց.

— Հը, կարծում ես դուար ելի, պրծար, ել հաշիվ չկա... Դե՛.
դե՛... հեռացի՛ր այստեղից, քանդակադո՛րծ... Այսինքն, թե քաբ
կրծող, հեռացի՛ր:

— Պարո՛ն...

Հրանուշը կծկված եր պատի անկյունում. նա գլուխը բարձրաց-
նել չեր կարող, ամոթի ու նախատինքի խոսքերը խեղճին գամել է-
յին պատին:

Սեվ ու խուճուճ մազերն ընկել եյին կանացի գեղեցիկ ճակատի
վրա, իսկ մի փունջ ջանում եր ծածկել նրա սպասումների իմաս-
տությամբ լի աչքը:

— Հասկացե՛ր, մենք սիրում ենք... Մենք ամուսիններ ենք—վճռա-
կանորեն ասաց Գուրգենը:

— Սե՛ր, հ՛ը,— հեզեց աղան և ավելացրեց — դա նման ե ձյան,
սեղմիր բուռնցքի մեջ և կհալվի, ջուր կդառնա, հասկացար, պարո՛ն...
Յես հիմարներից չեմ և լավ գիտեմ, առայժմ հեշտ ե, վտարերի հեա-
քերն անգամ մաքրել այստեղից...

Իսկ հիմա, ահա դուռը... Սակայն դեռ մենք կհանդիպենք:

Իսկ դու, օղջի՛կ, վոր դեռ օղջիկս ես համարվում, օյլես...
վերջ:

— Հա՛յր...

— Վե՛րջ, ասում եմ, պրծա՛մ:

Սինանյանն ուղեց ընդդիմախոսել, սակայն նրան սպառնացին ժան-
վարմով դուրս փնդել:

Նա ստիպված եր բաժանվել Հրանուշից, վորն արդեն հեկեկում
եր:

* * *

Լուսաբացին մեծ քաղաքի բոլոր կողմերից հեռեցին բանվորներին
աշխատանքի հրավիրող գործարանի շջակները:

Մալումյանը սովորաբար արթնանում էր չչակների ձայնից և անմիջապես հագնվելով դուրս էր գալիս պատշգամբ ու դիտում էր դեմը — դժագրվում էին դեպի յերկինք խոյացող դործարանի սիլուետները:

Սեղ ու այլքովող ծուխը յերկնով դեպի վեր, պղտորում էր յերկնի լազուրը:

Մալումյանը նայում էր այդ տեսարանին և ժպտում ինքնադուժ մարդու ժպտով:

Ծուխը դուրս էր թռչում աղահ, անկուշտ, հաղարավոր ծխանների բերաններից և դժվար չէր պատկերացնել, թե ինչպիսի տեսողային ալիստանք է կատարվում այնտեղ, դործարանի ներսում:

Մալումյանը, վոր ամեն ոք առաջնայան ժամերին լինում էր պատշգամբում, այդ ուր չէրեկաց:

Աղային տանջում էին ծանր, կոշմարային մտքերը:

Արթնանալով սովորականից շուտ, Մալումյանը պատշգամբ գնալու փոխարեն, շտապեց աղջկա սենյակը:

Ճշմարիտ է, նա քանդակագործին էր տնից դուրս վռնեց, մերժեց առանց այլ և այլու թյան, սակայն ամբողջ դեղերը քնել չկարողացավ:

Վրեժխնդիր լինելու ծարավը նրան հանգստություն տալ չէր կարող, դա պարզ է: Սակայն, Մալումյանը ինչպես տեսանք, իրեն կորցնող հայրերից չէր:

Նա, ճշմարիտ է, մի քանի բոպե կանգնեց աղջկա ննջասենյակի դռան առաջ և սեփական ականջներով լսեց ներսը տանջվող աղջկա հեկեկոցը, սակայն սենյակ մտավ խրոխտ և պահանջեց մոտանալ «չանը»:

— Ա՛յո, ամոթ քեզ, աղա Մալումյանի աղջիկը և մի հասարակ քանդակագործ... Անո՛ւնս ես խայտառակում... Լավ էր մորդ փորում ջուր դառնայիր, ելի՛ր:

Հրանուշը հորը նայում էր սև, աղեղնաձև հոնքերի տակից և իր կյանքում առաջին անգամ հանդգնեց դժվար խնդիրներ լուծելիս դեմ յերկնել նրան:

— Հայրիկ, դու ասում ես, թե նա աղքատ է. այդ ճիշտ է, բայց այդպես չի մնա, հավատա հայրիկ, չի մնա... Ո՛ր, նա տաղանդավոր քանդակագործ է, նա աղքատ չի մնա, շուտով նրան կճանաչեն բոլոր աղաները և կգնահատեն:

Հրանուշի վիճակը սոխավում էր նրան առանց ամաչելու ամեն ինչ պարզ, բացարձակ հայտնել:

Մալումյանը բազկաթուն առաջ քաշելով, նստեց Հրանուշի մոտ:

նրա փափուկ, փոքրիկ աջն առավ իր ասիերի մեջ և խրատելու համար ասաց — Խսի՛ր հորդ, աղջիկս, լսի՛ր և հասկացի՛ր (Մալումյանն աղջկա հետ առաջին անգամն էր այդ ձեվով խոսում):

— Վե՛րջ տուր, այդ քանդակագործին մտքիցդ հանիր:

— Ասում ես կհարստանա, այդպես հեշտ չեմ հարստանում, հասկա ցիր, աղջիկս:

Քեզ ուզում է աղա Արեւոյի վորդին, Սամսոեթին և ձեռք խնդրում, իսկ դու — քանդակագործ... թծ...

— Հասկացի՛ր, աղջիկս, քանապատեղծները և քանդակագործները պատվում են մեր վոսկու շուրջը... Ախր ինչո՞ւ յիս ուզում պատվովի կին լինել, չե՞ վոր պատվովի դուխար չուս և դալիս...

Մալումյանը գոհ իր հաջող համեմատությունից, ժպտաց և քաշելով մատնաշափ շղթայից, ժիլետի դրզանից հանեց վոսկյա մեծ ժամացույցն ու հաճույքով որբեց, փոխանակ ժամանակին նայելու:

Հրանուշն ողտվելով հոր մեղմ վերաբերմունքից, ինքն էլ իր հերթին, աշխատեց համոզել նրան:

Յեւ հիշելով յերկար դիչերներին կարդացած ոտանների խոսքերը, ալվելի վողեվորվեց:

Աղան յերկար ժամանակ լսելով նրան, վերջնականապես համոզվեց, վոր իր խոսքերն աղջկա վրա պահանջված աղդեցություն չգործեցին:

Նա, հանկարծ, ընդդատ վտաքի յեղավ, կրկին գայրացավ և արհամարանքով դուռը վրա քաշելուց հետո՝ դուրս գնաց:

Նա փնջացնելով, շրջում էր միջանցքում, տալա ինչ վար բան հիշելով, դնաց, րացեց աղջկա սենյակի դուռը և ասաց.

— Հա՛, պըմա՛յ, դիտցիր, աղա մասին էլ չե՛ք խոսի, դիտցիր վերջ, կամ, — կամ... իմ աղջիկը չի կարող հոր խոսքից դուրս գալ:

— Մեկ էլ խմացիր, վոր քո քանդակագործի ընկերները շատախառն են, հա՛... իսկ կժան ձին իր մոտ կտանցած ձիուն, կամ կծի և կամ քացի դցել կարող է սովորեցնել:

Այդ Մալումյանը գտնվում էր անկանելի դրություն մեջ. նա չէր կարող հաշտվել այն մտքի հետ, վոր իր աղջիկն ամուսնանար մի հասարակ մարդու հետ, մի մարդու, վորի հարստությունը մոբճն ու քաբն էր... Նա, չէր կարող լսել նաև աղջկա տանջանքների ձայնը: Նրա մեջ կոպում էին յերկու ուժ, դրանից մո՞րն էր ալվելի գորեղը դժվար է ասել, սակայն Մալումյանը քանդակագործի տնունը լսել անդամ չէր ուզում:

Այն, վոր Գուրգենն ունեք ընկերներ՝ Հրանուշը գիտեր, իսկ, թե ինչի՞ մասին էր հոր խոսքերը, նա չհասկացավ և յեթադրեց, վոր

գաւ հոր արտեղութեան արտահայտութեանն եր, սակայն յերկտասարդ-
աղջիկը, հոր հետեւից տանջվում եր:

Նրա մեջ կուլում էյին յերկու ուժ. — այդ ուժերից մեկը հայրն եր,
վորին նա, ի հարկէ, կապված եր և մյուսը՝ Գուրգենը, վորը նրա
յերջանիկ սիրտ աշուճեմ եր, աղաղակ փառքի հանգրվանը, և այն մար-
դը, վորի վորդին արգեն խաղացել եր իր կրծքի տակ...

Գուրգենը գեմ եր այդ բանին... Սակայն Հրանուշը չկարողացավ
զօպել իր սերը և մեծ արվեստագետի կին լինելու տարիներ յերազմ
կատարման տենչանքը:

Մանկավարդ կինը յերկնարարութի մեջ եր: Այդ ուժերից մեկը
պետք և հողթեր և այդպէս էլ յեղավ:

* *

Գուրգենը հեռացավ սիրած կնիկից, սակայն կապը չկարվեց, գըր-
տեց նամակները, տեսնա աղափնու նման, թուշում էյին զեպի Հրանու-
շի բնակարանը, իսկ այնտեղից գուրա էյին դալիս կրկնապատկված:

Նամակատար փորձված մարդիկ իրենց գարծն էյին տեսնում:

Հրանուշը հենց այն օրից, յերբ առաջին անգամ զգաց, վոր ինքն
աղջիկ և, մտածում, յերազում եր դառնալ արվեստագետի կին:

Տաղանդավոր, գեղեցիկ աղամարդու կին, իսկ Գուրգենը նրա յե-
րազած ասպետն եր, միայն թեև աղքատ, առանց հարստութեան:

Հրանուշը չեք վհատում, գիտեր, վոր աղաները Գուրգենին կգնա-
հատեն և կհարստանա:

— Ո՛ր, շատ և սիրում Հրանուշը, հենց մանկութեանից սիրելով
արվեստը, քանդակը նա հաճախ փաթաթվում եր պարտեզի մարմարյա
արձաններին և մտածում եր, թե ինչպէս են ստեղծվել դրանք, ինչ-
պիսի մատներ են ստեղծել այդ հրեշտակներին՝ թեվեր ունեցող, զեպի
յերկինք թուշել ձգտող քանդակները...

— Գուրգենը կհարստանա, գրա մեջ կասկած չկա և այն ժամա-
նակ հայրս պետք է համոզվի, վոր յես ավելի ճիշտ եմ ընտրել:

Այդպէս եր խորհում իր առանձնատենչակի փափուկ բարձերի մեջ
թաղված աղջիկը, յերբ, մի խորին գիշեր, Գուրգենն իր ընկերներով
կանգնեց աղա Մարությանի տան պարսպի տակ:

Նրանք, ստիկերի նման իջան պարսպից և սողալով հստան Հրանու-
շի բնակարանին:

Բաց պատուհանից ներս ընկավ մի խնձոր, աղջիկն արթուն եր. նա
տղատում եր դրան, ցատկեց անկողնուց, խնձորի մեջ, փոքրիկ փոր-
վածքում, գրված եր մի գրութիւն:

— Պատրաստ յեղիր, բո Գուրգենն— գրված եր այնտեղ:

Մինչ այս, մինչ այն՝ պատի վրայով վեր եր բարձրանում մարդ-
կային մի զանգված. նա հասավ պատշգամբին, թեքվեց և պատուհա-
նից ցատկեց ներս:

Դա Գուրգենի ընկերներից մեկն եր:

Քիչ հետո, պարանով ներքեվ եր իջնում Հրանուշը:

Յերիտասարդը սենյակում մենակ մնաց, նա գրպանից հանեց մա-
տիտը և պատի վրա մեծ տառերով գրեց.

— Պարոն, մենք չվեցինք, դուցե ծածրակը տեսնես, բայց մեզ
յերբեք:

Առավոտյան Մարությանի տանը իրարանցում եր, վաճառականի
մարդիկ ընկան այս ու այն կողմը, բայց կորածը վերադարձնել անհը-
նայրին յեղավ, մինչև, վոր նրանք իրենք հայտնվեցին:

* *

Այդ օրից անցան ամիսներ, լրացավ մեկ և կես տարի, ինչ Հրա-
նուշն ապրում եր քանդակագործի հետ:

Նա Գուրգենի տանը վոչինչ չգտավ, այնտեղ բնակւած էյին
մի քանի մուրճեր, գրանիտ և տարբեր մեծութեան արձաններ:

Հնացած թախտի վրա անկողինն եր ու մի փոքրիկ աղջիկ— Գուրգե-
նի քույրը— Փառանձեմը:

Բամբակի մեջ մեծացած Հրանուշը հենց առաջին օրը սարսափելի
ցուրտ զգաց, վորը ծակեց, անցավ նրա վոսկորները:

Սակայն ինքն իրեն համոզում եր, վոր Գուրգենը շուտով
կհարստանա, կգնահատեն, դա սկիզբը կլինի, իսկ հետո՞, հետո՞...

Հրանուշը հրաշալի պատկերներ եր ստեղծում:

— Գուրգենը, — մտածում եր նա, — կգառնա արվեստի լուսապաշ-
տառ գաղաթ. շատերը կցանկանան նրան տեսնել, իսկ ինձ... Ո՛ր, աստ-
ված, ի՛նչ հրաշալի յե կյանքը, մենք կըջենք աշխարհի բոլոր կող-
մերը, քանդակագործը պետք է կյանք տեսնի, շատ աղաներ, մեր տե-
սութեան համար խնձույքներ կսարքեն... ու թերթերում կգրեն, կը-
գնեն մեր նկարները և մեծ տառերով կհայտարարեն— մեծ քանդակա-
գործն ու իր կինը... այո, և:

— Ո՛ր, աստված, վորքա՞ն հրաշալի յե կյանքը...

Ի հարկէ այս ամենի մասին Հրանուշը հայտնում է նաև Գուրգե-
նին, սակայն ավելի նվազ գուշներով:

Գուրգենը մեղապարտի նման ժպտում եր և գլուխը որորելով ա-
սում— ե՛հ, ինչե՞ր ես մտածում...

— Դե՛վս, սիրելիս, — շնչում էյին Հրանուշի կիսախուփ չրթունք-
ները:

Քանդակագործը չեք հասկանում— ի՞նչ դե, ի՞նչպէս թե, սիրելիս...

— Ա՛յ, այսպէս, — ժպտում եր աղջիկը և վորպէս պատասխատ

սեղմում, մխրճում, կծկում յերեսասարդ տղայի թարմ, առաջ քա-
ղուկների մեջ:

— Գուրգեն, սիրելիս, դուն մեծ անուն կունենաս. չե՞, ամենքը
մեզ մատով ցույց կտան չե՞, — հարցնում էր Հրանուշը:

Սակայն սխալվում էր նա, Գուրգենը բոլորովին ուրիշ ճանապարհի
վրա յեր արդեն...

* * *

Իսկ պատահեց անապատելի: Կես ուր էր, յերբ քանդակագործի դռա-
նը կանգնեց մի փակ կառք, ահա զից դուրս յեկավ սև ծածկոցս/
դեմքն ու մարմինը պատած մի կին և շտապ քայլերով մտավ քանդա-
կագործի բնակարանը: Գուրգենը զարմացած յետ-յետ դնաց, ճանա-
պարհ տվեց: Կինը առաջացավ, Հրանուշը ճշած և վաթաթվեց նրան:

Մի տարի յեր անցել, ինչ նա չէր տեսել Հրանուշին, իսկ հիմա
նրա մոտ էր գալիս սեփական դեմքը ծածկած: Հրանուշը, վորը վաղուց
արդեն զգացել էր իր սխալը, տեսնելով նրան, լացը զսպել չկարողա-
ցավ:

Անկյունում խաղում էր յերեխան (ներքե ունեյին առաջին յերե-
խան) Փառանձեմը նրա համար տուն էր չինում:

Կինը դեմքի ծածկոցը յետ տարավ, իսկ Հրանուշը հեծկրտում էր —
մայրի՛կ, մայրի՛կ...

— Չեյի՛ դա, բայց թե մայր եմ:

Կինը սրբում էր արցունքները — Թե հայրդ իմացավ պրծանք, վա՛ր
ինձ, — ասաց Սանու՛մը և զարմացած նայեց շուրջը: Գուրգենը նստած
էր մեջքով դեպի նա, թերթում էր մի դերք, չէր կարդում, արագ-ա-
րագ շուռ էր տալիս թերթերը:

— Աղջի՛, վո՛ւյ, մերդ քոտանա, հիմա հասկացա՞ր, թե վորտեղից
ուր ես ընկել, — թաշկինակը դեպի աչքերը տանելով ասաց նա և ավե-
լացրեց, — բա ե՞ս ինչ ե:

Նա ցույց տվեց Փառանձեմին, վորը հնամաշ չորերի մեջ՝ վախե-
ցած նայում էր, իսկ Սանու՛մը փաթը ինչ բնեց և գայլացած ասաց —
Լավ է երի, քո՞ծ ել ունե՞ք:

Սանու՛մն իրեն զսպել չկարողացավ, ատելութունը դեպի այն մար-
դը, վոր էր աղջկան հետին աղքատության դռուն էր տարել, կրծում
էր նրա սիրտը և յեղ էր փնտրում:

Գուրգենը դերքը շարտեց մի կողմ, յետ դարձավ, Սանու՛մի ու
նրա հայացքները հանդիպեցին իրար:

— Չե, մայրի՛կ, դա Գուրգենի քույրն է, — հայացքով մորը կշատա-
րելով ասաց Հրանուշը, սակայն մոր խոսքերը նրա սրտովն ելին:

Մայրը չդիմեց — Գի՛, վորը պահող ես դարձել — քո՞ծի քո՞ծ...

Գուրգենը, ըմբռնա փոսքի կանգնեց, գնաց դեպի դուռը, փոտ-

րով խիեց, դուռը ճուռաց ու բացվեց կրնկի վրա, այն Ժամ Գուրգենը
յետ նայեց ու համարյա, թե ըլլավեց — տիկին, կամ Սանու՛մ, վորն
ուզում է, բարեհաճեցե՛ք դնալ այտտեղից — հեռացե՛ք:

Քանի՛ — քանի՛ անգամ նույն այդ Սանու՛մը արհամարել է Գուր-
գենին, տանից դուրս վռնդել և ահա յեկել է հարմար բուսին:

— Հեռացե՛ք, — ըղավում էր նա:

— Դե՛, յետ իմ աղջկա տանն եմ. տուն, յեթե սա նման է տան:

— Բավական է. ջհանգամը դնացե՛ք, պառավ...

Սանու՛մը մոռացավ վերցնել սև ծածկոցը, նստեց կառք և հեռա-
ցավ բանվորական թաղամասից. հարեմանները, վորոնք աղմուկի վրա
տալաքիլ էլին, զարմանքով նայեցին հեռացող կառքի հետևից:

— Գուրգեն, Գուրգեն, ի՛նչ արի՛ր, նա իմ մայրն է, հարազատ
մայրս: Հրանուշն հեկեկում էր, նա աի՛ր մեջ տենդորեն տրորում էր
մոր տված փողը:

Իսկ հետո վրդովված հարձակվեց ամուսնու վրա: — Ո՛ւր են քո
խոստումները, ինչո՞ւ չես աշխատում, ինչո՞ւ կիսատ թողեցիր արձանը,
ինչո՞ւ չես վերջացնում կայսեր արձանը:

Հրանուշը չէր կարող հավատալ, վոր Գուրգենը, իր Գուրգենը,
այլիս չէր կարող կատարել այն, ինչ ինքը ցանկանում էր:

* * *

Սակայն Հրանուշը տանջվում էր. Գուրգենը կամ բոլորովին չէր
աշխատում և կամ քանդակում էր այնպիսի գործեր, վորոնցից նա կամ
բան չէր հասկանում և կամ զարմանում էր, վոր Գուրգենը իրեն
թույլ է տալիս քանդակելու այդպիսի զարմանալի... Հասարակ բաներ:
նա միայն զգում էր, վոր այն հույսը, թե յերեմիցե կզնահատվի
Գուրգենը, մոռացվող բան էր դառնում:

Վերջին չըջանում Սինանյանն ուղակի չէր աշխատում, նա նստում
էր աթոռին և գլուխը ափերի մեջ առնելով, ընկնում էր մտքերի
մեջ:

Հրանուշը գիտեր դրա պատճառը, չե՞ վոր մի քանի սր տառ
ձերբակալվել էր Գուրգենի վաղեմի ընկերներից մեկը, բանաստեղծ
Վլադիմիր Կուզնեցովը:

Հրանուշը այսուրևս պես հիշում է բանաստեղծի շանթոյ հայաց-
քը, յերկար, չիկավուն մաղերը, պղա և նրա տարօրինակ խոսքերը...
տե՛ր, խայթո՛ղ լեզուն:

Չե՞ վոր ընդամենը մի ամիս առաջ նա յեկել էր Գուրգենի մոտ
և աշխատում էր համոզել նրան:

— Գուրգեն, դու չպետք է տատանվես, դու պետք է վերջնականապես հասկանաս, վոր փրկութիւնը պայքարի մեջ է...

Հրանուշը լսեց նրա խոսքերը, ինքն իրեն չկարողացաւ գտնել և գիմելով բանաստեղծին ասաց. — պարոն, դուք արդուն եք քարոզում, դու լավ մարդու դորձ չես:

Ապա հիշելով հորից լսած խոսքերը, ավելացրեց— աղքատներ և հարուստներ չկան, պարոն բանաստեղծ, ով աշխատի կհարստանա— աշխարհում կան աշխատողներ և ծուլեր:

Հրանուշն այդ խոսքերն ասելիս, միտքն ուղղում էր Գուրգենին, վորի հետ վիճել էյին (նրանց մեջ արդեն սկսվել էր խռովութիւնը):

Բանաստեղծը Հրանուշին չպատասխանեց. նա մի հայացք ձգեց նրա վրա և յերբ դրսում բաժանվում էր Գուրգենից, սեղմեց նրա ձեռքը և ասաց— սիրելիս, վստահ եմ, վոր խոսքդ կլինի վճառական, վերջ կտաս աղաներին ծառայելը և չես պատրաստի թաղամօրի արծառ, չե՞ վոր նրանք այդ կղարձենք մեր դեմ գնք: Յեւ հետո, սիրելիս, յես ուզում եմ ասել, վոր կինդ իր աղա հոր աղջիկն է նաև հոգով, յես, դեռ այն օրն ասացի, վոր քո սխալներից մեկն էլ յեղել է նրա հետ կապվելը:

Յես զարմանում եմ, վոր դու քեզ թույլ ես տվել այդքան մտնրաւալ— աղջիկ փախցնել:

Բանաստեղծը ծիծաղեց և տարուբերեց գլուխը:

— Պետք է կատարես վճառական շրջադարձ, մենք քեզ կողմնէք, մի կողմ նետիր դահիճների արձանը պատրաստելը, նրանք դրան արժանի չեն, այլապես ժողովուրդը քեզ կատի:

Գուրգենը լսում էր Վլադիմիր Կուզնեցովին և վորովհետև ամոթ էր զգում, գլուխը կախել էր:

Այդ բանաստեղծն էր ահա, վոր ձերբակալվել էր կառավարութիւնի գեմ վտանաւորներ գրելու և հեղափոխական գործունեութիւն համար:

Գուրգենը նստած էր նույն տեղը, գլուխն ափերի մեջ, փոքրիկ Պուրենը խաղում էր նրա վտարների առաջ, իսկ փառանձեմը, ավելորձեռքին, մաքրում էր հատակը:

Հրանուշը զարմանում էր, վոր այդպիսի մի մարդու ձերբակալումը վիշտ էր պատճառել Գուրգենին, իր Գուրգենին...

— Մամա, մամա:

Խոսում էր փոքրիկը, իսկ մայրը, յերբեմն ինքն իրեն գտնելով, լուռ էր, իրարամերժ մտքերն արդեն իսկ սկսել էյին տարդի վոստյան ձյուտել նրա շուրջը:

Հրանուշը յերազում էր, իսկ Գուրգենը զարմանալի մարդ էր, նա արդեն չէր ուզում դուր գալ աղաներին, իսկ աղաները... Ի՞նչ կասեյին նրան:

— Այս պայմաններում եւ ի՞նչ յերազ ապագա հարստութիւն ու փառքի մասին, — մտածում էր Հրանուշը և նայում Գուրգենին, փոքն արդեն, կարծես թէ փոխվել էր:

* * *

Յերեկո յեր, Հրանուշը վառեց նավթի լամպարը:

Գուրգենն աշխատում էր, կինը յերկար ու ակնապիշ դիտում էր ամուսնուն, վորը մուրճով խիտում էր դրանիտին, իսկ հետո, մատներով մաքրում քարի փոշին, փչում էր և յետ—յետ գնալով նայում ավարտվող արձանին:

Վերջին շրջանում դա առաջին դեպքն էր, վոր Գուրգենն սկսել էր յեռանդով աշխատել, կիսատ թողած գործը ավարտելու համար:

Հրանուշը հետևում էր նրա շարժումներին, իսկ հետո, լուռ յյուսնը խզելով, բռնեց Գուրգենի թեփը և քանդակը ցույց տալով հարցրեց. — լսե՞ր, ու ինչի՞ համար է, ի՞նչ ես ուզում ասել:

— Սա՞, — ասաց Գուրգենը և շարունակեց քանդակել: Հրանուշը սպասում էր, ամուսինը յեռանդով քանդակում էր, ստեղծում ձեւեր, դիմագծեր, շարժում, կամք, վիշտ, կյանք...

Գուրգենը յետ դառնալով, նայեց կնոջը և ասաց — նայի՛ր, կհասկանաս, — սա հանքափոր է, մշակ:

— Բեռի տակ է, — ասաց կինը, — և աչքերում էլ մի տեսակ դառնութիւն կա, ատելութիւն... Ինչո՞ւ, ահափոր է:

— Այո՛, — շեշտեց Գուրգենը:

Նրա ճակատից ընկնում էյին քրտինքի կաթիլները:

— Այո՛, — կարծես մեկի հետ վիճելով — ձայնը բարձրացրեց նա և ասաց — տնքում է բեռի տակ, ատում է, նա պատրաստ է թքել աշխարհի վրա, աշխարհ, վորտեղ մարդը դառն դատում և մեռնում է քաղցած:

— Յեթե չեմ սխալվում դու մի անգամ յսել ես բանաստեղծ վլադիմիր Կուզնեցովի խոսքերը:

Քանդակագործը լսեց, նրա աչքերն ընկել էյին քնած յերեխայի գունատ դեմքին, վորտեղ դեռ մանկուց յերեւում էր մեքսիկական թախիծը: Լուռ էյին:

Սինանյանը վերսկսել էր աշխատանքը և թվում էր, թէ մուրճով տաշում է գիշերային լուռութիւնը, վորը գրանիտի նման իջել, ծանրացել, խեղդում էր... դրանից հետո ամուսինները վռչ մի թոռք չէ փոխանակեցին:

Յերբ մտան անկողին, Հրանուշը դարձաւ Գուրգենին և ասաց.

— Ինչպիս յերեւում է, քո այդ Կուզնեցովի շարժատան է և իսկապէս

էի, վոր նրան ձերբախտել էն:

— Իսկ դու — հիմա՞ր ես...

Հրանուշը վերափորված էր. նա լռեց, սակայն սմբողջ գիշերը նրանք խոսով էլին և վոչ մի խոսք չփոխանակեցին:

Այդ առափոտ Հրանուշը շուտ արթնացավ: Նա ամուսնուն նայում էր դառնացած, շաքարամանի մեջ մի կտոր շաքար կար, իսկ պահաբանում հացից բացի՝ վոչինչ:

Փսրիկը լաց չեղավ, մայրը շաքարի կտորն ու հացից կտրեց տվեց յերեխային և գրկելով նրան, դնաց ծովափ:

Առափոտ էր, հարուստ մարդկանց տնային ծառաները շտապում էին չուկա, Հրանուշը մոռալ էր. նա հիշում էր հայրենական տունը...

Անցորդները շտապում էին. նա հասավ ծովափ, ալիքները վազում էին, յերբեք ու յերբեք չհասնելով իրար, հուսախափ յեռնային դառնում, ողակում և փշրվում ծովի անսահման հարթության վրա:

Հրանուշը նայում էր հեռուն, վողորկ ճակատի վրա արդեն յերեւում էին սուղին կնճիռները: Իրարամերժ մտքերը նրան հանդիստ էին տալիս:

Յերեխան լաց չեղավ:

— Մա՛մա:

Նրանք յերկար սպասեցին այնտեղ, արեւը բարձրանում էր զենիթ և վաղուց արդեն դադարել էր առափոտվա քամին:

Սինանյանը վերջացրեց աշխատանքը և մուրճը դնելով աշխատասեղանին, մի անգամ ել նայեց քանդակին ու շտապեց գեպի ննջասենյակը:

Հրանուշը չկար, նա գիտեր, վոր այդպիսի դեպքում նա սովորաբար լինում էր ծովափին:

Ուրախությանը կնոջը մասնակից դարձնելու համար, շտապեց այնտեղ:

— Հո՛ւր ջան, — յերջանիկ ժպիտը դեմքին ասաց նա, — մի նոր ճիտք եմ հղացել, մի նոր քանդակ դա, յերեմի թե կլինի գլուխ դործոցս, խի՞ր պատմեմ:

Սինանյանը յերկար ժամանակ խոսով պահելու բնավորություն չունեւ. այնուամենայնիվ սիրում էր կնոջը և նրա վերաբերմունքը համարում էր ուղղելի, դրա համար ել կնոջ հետ խոսուած էր միանգամայն պարզ, ախպես, վոր թվում էր, թե նրանց մեջ վոչինչ չէր յեղել:

Ունենալով արտիստի բնավորություն, նա պարզ էր և չարություններ մոտացող, սակայն այս անգամ արդեն Հրանուշը խիստ վերափոխվեց:

— Ձե՛մ ուզում, — հանկարծակի բռնկւումով ասաց կինը, նրա ճակատի կնճիռները կծկվեցին, հարձակման սպառնալիքով, ասլա յերեխային մի կողմ հրելով, ձեռքերը շալի մեջ, կրծքին դրած, հասակով մեկ կանգնեց Սինանյանի դեմ և համարյա թե բղավեց. — պատմե՛ս, պատմե՛ս, իսկ դու, այնպիսի բաներ քանդակիր, վոր գնվի, յես ապրել եմ ուզում, կյա՛նք, իսկ դու բաներ ես հնարել, ատելությամբ լնցուն մուշաներ... Յես կյա՛նք եմ ուզում, կյա՛նք — ասացեք խնդրեմ, այդ վո՞ր պարենն է, վոր ձեր ատաղությանը փող կտա:

Կինը հուզված էր. նրա լիքը կուրծքը տենդոտն ցնցվում էր, գեղեցիկ դեմքի վրա գծվում էին զայրույթի կնճիռները:

Սինանյանը կանգնած էր գունատ, խոխով մազերը քամուն տված, իսկ դեմը ծովն էր, նրա անեղը կապույտը:

Քանդակագործը լուռ էր, նա բռնեց յերեխայի ձեռքը և զիմեց գեպի տուն:

... Իջնում էր գիշերը և թվում էր, թե մեկը հսկայական մարմնով՝ վերաբիւլե լայն փեշերը բացած, ծածկել էր արեւը ու թարթում էր իր մի աչքը՝ լուսինն էր:

Ծանր ու համբաքալ էր իջնում գիշերը:

— Այդ ուր Սինանյանն արթնացավ սովորականից շուտ. նրան հայտնել էին, վոր ցարական դատարանը հայտարարել է հեղափոխական բանաստեղծ Վլադիմիր Կուզնեցովի դատավճիռը: Կախաղանն արդեն պատրաստ էր, Սինանյանը դատավճռի վայրն հասավ չափազանց ուշացած:

Յեխոտ ճանապարհով կախաղանի մոտ յեկավ սև կառքը, քիչ հետո ժանդարմը, ճարպիկ մի շարժումով, բացեց կառքի դռնակները:

Փոքր ինչ անց, այնտեղից դուրս յեկավ դեմքն արդեն մազակալած, մի բարձրահասակ մարդ, նրա յերեւելալը շփոթունք առաջացրեց, կողակները խթանեցին ձիերը: Բանաստեղծը քայլում էր հպարտ, գլուխը բարձր բռնած: Սինանյանին թվաց, թե նա, իր վազեմիքները, հիմա կռեսնի իրեն, ավելի ճիշտ, փնտրում է, ահա կդանի և կհանդիմանի — թաղավորն ինձ սպանում է, իսկ դու մտածում եիր նրան արձան կանգնեցնել, ամո՛թ...

Քանդակագործի սիրտը ցավ էր զգում, նա գլուխը կախեց:

Սեվ հագնված, հաստ բեխերով պաշտոնյան կարգաց դատավճիռը, — նորին կայսերական մեծության հրամանով...

Հանդիստ, առանց վորեւէ վրդովմունքի, Վլադիմիր Կուզնեցովը շուտ էր դատավճիռը և միայն այն ժամանակ, յերր անձրեվը շառ...

էր անհանգստացնում, վերցնում էր ակնոցները և այն մատներով մաքրում անձրելից:

Այնպէս էր թվում, թէ բանաստեղծը տարված է ինչ վոր հանգիստ խոհերով և ուղղակի ուշադրութիւն չի դարձնում դատավճռին, վորն իրեն մահ էր բերում:

Սարսափի ամենաչնչին նշույլ անդամ չկար նրա դեմքին:

Գուրգեն Սինանյանը դարձանում էր, թէ վորտեղից է տրված այդ շարի վեհութիւն և անխախտութիւն իր բանաստեղծ ընկերոջը: Նա, միեւնոյն ժամանակ, խիստ ամբոստանք էր դրում մահվան վիճի առջև կանգնած տաղանդավոր բանաստեղծի կորստյան մտքից և ամաչում էր, վոր ինքը...

Բայց ահա և վերջացաւ ամեն ինչ. ավարտուից դատավճռի ընթերցումը:

Դահլճները պետք է տեսնեյին իրենց դուրձը, յերբ ամբոխի միջից լավեց մի ճիւղ, իսկ դրան հաջորդեց խրոխտ մի բացականչութիւն — Խնչ եք կանգնել, մարդիկ, Խնչ եք սպասում... Զարդեցեք սրբիկաներին և ազատեցեք ազնիւ մարդուն, ընկերներ...

Դա կռվի կանչող կոչ էր, կռվի, վորը պետք է ոկսվեր կառավարական զորքի և մասսայի միջև:

Համարյա նույն մոմէնտին, ամբոխի միջից դուրս յեկաւ մի կին և ծաղկեփունջ նետեց բանաստեղծին ու փռվեց դետին— վոստիկանի հարվածից ուշաթափ յեղաւ:

Դա բանաստեղծի մայրն էր:

Այդ ամենը կարծես թէ փոթորկի աղանչան էր:

Ամբոխը խռոնկեց իրար, ձիերը ծառս յեղան, լավեցին հրաձգութիւն ձայներ, փռչի բարձրացաւ, դահլճներից մեկը, արդեն չղթալակաւ, բանաստեղծի վոտքերի մոտ փչեց վերջին շունչը:

Ժողովուրդը մաքառում էր, սակայն դժվար յեղաւ աղատել կուզենցովին:

Կազակների մի նոր խումբ յեկաւ:

Գուրգեն Սինանյանը իրարանցման ժամանակ փախուստի մասին չմտածեց: Նա կանգնել էր նույն տեղում և ատելութեամբ նայում էր առաջ, գետի մտրակող կոզակները, նրան հրում էյին այս ու այն կողմ: Նա նկատեց իր կնոջ հորը, աղա Մալումյանին, վորը ժպտաւ դեմքին, նայում էր շուրջը. այդ ժամանակ անգամ կոզակները նրան բարեւ էյին տալիս, խոնարհվում:

Քանդակագործի աչքերի առաջից չէր հեռանում բանաստեղծը կախաղանի վրա— դարհուրելի տեսարանը:

Չէ՞ վոր ընդամենը մի ամիս առաջ բանաստեղծը խրատում էր նրան—դատավորը դահլճ է, իսկ հիմա... Սինանյանը մտածում էր. —դահլճ ե...

Կառավարական զորքը մասսային յետ էր մղում:

Կազակներից մեկը ձին թափով քշեց Սինանյանի վրա, բռնակեց և մտրակի մի ուժեղ հարված իջաւ նրա մեջքին: Գուրգենը ձեռներն առաջ պարզեց, ուզեց պաշտպանվել, սակայն մի ուրիշ հարված, վորն իջել էր դեմքին, նրան ուշաթափ արեց:

3912
39

Ծովի-մրրկուն հարթութիւն վրա, հանկարծակի բարձրացող ալիքի հսկայական խոյացումն էր կարծես, վոր ամեն ինչ առաւ իր հզոր զորութեան տակ:

Մի փոքրիկ բարձրութեան վրա կանգնած էր յերիտասարդ մի մարդ և իրար խռնված ամբոխին կռվի կոչ էր անում:

Գուրգեն Սինանյանը, վորն արդեն ուշքի յեր յեկել, յերերուն քայլերով, շարժվում էր առաջ, դետի յերիտասարդը:

Այդ քաղաքի մրրկուն քամին, ալիքում էր ճառախոսի խռիւ մաղերը:

Մասան յետ շարժվեց, ճանապարհ էյին տալիս, մի բոլորովին ծեր կնոջ:

Պատալը բանաստեղծի մայրն էր: Նրա դուռնառ դեմքի վրա կենդանութիւն արտահայտող յերկու աչքերն էյին միայն, վորոնց մեջ վառվում էր հուշան ու գորովանքը... Պատալը հասաւ յերիտասարդ մարդուն, նա ձեռքը պարզեց առաջ:

Յերիտասարդը բռնեց նրա ձեռքը և բարձրացրեց վեր: Իրար կողք կանգնած էյին հեղափոխական բանաստեղծի մայրը-բոլորովին սպիտակ մազերով և յերիտասարդը:

Այս անգամ արդեն խոսում էր մայրը:

Շուտով յեղաւ կոզակների և ժանդարմերիայի նոր հարձակումը: Կրակում էյին կատաղի կերպով, թվում էր, թէ թիթեղյա տանիքների վրա յերկաթե կարկուտ էր թափվում:

Գնդակներն էյին տեղում, սակայն իդուր էյին կոզակների գոլծաղըրած ջանքերը, բարձրանում էր հեղափոխութեան ալիքը և այդ ալիքի վրա, վորպէս ամենակարող ուժ կանգնած էր սեահեր յերիտասարդը...

Գուրգեն Սինանյանը նմանվում էր ահեղ ծովի մի փոքրիկ կաթիլին. առաջ շարժվող մասսան նրան տանում էր իր հետ: Նա մի բոպե ժամանակ դտաւ իր կոզքին կանգնած մարդուն հարցնելու, թէ ո՞վ է այն մարդը, սեահեր յերիտասարդը.

Ա. Գրիգորյան — Արեւի ուժը 2



— Նա, ասաց խոսակցը, — և ավելացրեց, — նա, սեւիւհեր այդ մարդը, Սոսոն է, մեր Սոսոն...

Համառ կռիվ էր գնում, թվում էր, թե թիթեղյա տանիքները վրա թափվում էր յերկաթե կարկուտ... բացված լուսամուտից ուռնակներ նետեցին կողակները խմբի վրա:

Գալիս էլին կառավարական զորքի սեփական ջոկատներ:

Յեւ նույն օրը յերեկոյան, պոլիցիայի քաղաքային վարչութեան պետը վարժ ձեռագործով զեկուցադիր էր պատրաստում կենտրոնին: Այնտեղ ասված էր. — մեզ մոտ կրկին յերեկոյան է հայտնի հեղափոխական Զուլիաշվիլին — նա բոլորովին յերիտասարդ է. նրան Սոսոյին ասում: Մեր ջանքերը Զուլիաշվիլուն բռնելու համար, իդուր անցան. նրան պարտադրում էր ժողովուրդը:

... Բայց մենք կկատարենք թաղավորի կամքը... ձերդ պայծառափայլութեան սղնությամբ:

Բաթումի

* * *

Նոր օրեր յեկան, վշտի, աղքատութեան օրեր: Հրանուշը լուռ էր. նա ամուսնու հետ խոսում էր յերբեմն միայն, ամաններն ու տան իրերը շարժում էր ջգային, չրսկոցով, ազգամիջյան կռիվներն էլին, իսկ սովն իր ահուկի բերանն էր բացել:

... Յեւ, քանդակագործը հանուն կոպեկի՝ հացի համար, կնոջ պատվերով, քանդակեց կյանքի զեղխութեանն ու վայելքն արտահայտող արձաններ, սակայն նա համառում էր և ձեռք չէր վերցնում մուրճ ու բրնձ, կայսեր արձանը վերջացնելու համար...

Նա հիշում էր բանաստեղծին... կախաղանը... մրրկավարս մարդու վերջին խոսքերը:

Նրանց դրութիւնը կարծես թե լավացավ:

Նոր քանդակները, այնուամենայնիւ, պարոնների կողմից ընդունվում էլին, գնում էլին:

Գուրգենն ինքը չուկա չէր տանում, վաճառում էլին ուրիշները: Յեթե գնողներն ուզում էլին իմանալ, թե ո՞վ է քանդակի հեղինակը, Գուրգենը պատվիրել էր ասել՝ քանդակագործը մեռած է:

Նա ամաչում էր ներկայանալ մերկ մարմինները վաճառքի հանող կանանց, ցոփ ուրախութեան քանդակագործ, այն ժամանակ, յերբ բանաստեղծները կախաղան են հանվում:

Նա մոռացվել էր, չըջում էր ավելի կորացած, նիհար:

Նրան հակառակ՝ Հրանուշը, հույս ունենալով Գուրգենի վերափոխման հնարավորութեան մասին, նրան հորդորում էր պատրաստել

թաղավորի արձանը և ուրախ էր, վոր ամուսինը վերադարձ է կատարում:

— Թաղավորի արձանը, — թվում էր, թե այդ էր Հրանուշի սիրուկը:

Գուրգենն աշխատում էր միայն հացի համար, նրա մեջ մարել էր ստեղծագործութեան կրակը:

Յեւ շուտով հիվանդացավ:

Յերկար տեեց այդ հիվանդութիւնը: Հրանուշը մոռաց էր, դժգոհ, սակայն Գուրգենը լավանում էր, նա մոտի կանգնեց:

Մի քանի ամսվա ապահով կյանքից հետո, քանդակագործի ընտանիքը դարձել էր բոլորովին անպաշտպան, ով կողներ հիվանդ քանդակագործին:

Սինանյանը նայեց աշխարհին և ստեղծագործութեան կրակն այրեց նրան. բունն ատելութեամբ վառում էր նրան և բոլորքում ստեղծող ուժերի հրաթեղ միտքը:

Նա վերցրեց մուրճն ու բրնձ, սակայն գրանիտ չկար, մողէին արգեն պատրաստ էր, հարկավոր էր քար, իսկ Գուրգենը գրանիտ չուներ:

Նա ուղղակի քար էր մուրում, փող չկար:

Բանիւր Սեթոն և նրա բոլոր հարեմաններն ապրում էլին ծայրահեղ աղքատութեան մեջ:

Գուրգենը գիտենալով այդ, իրեն թույլ չէր տալիս գիմելու նրանց, համոզված էր, սակայն, վոր Սեթոն և ընկերները կապին իրենց վերջին կոպեկը — ընտանիքի որմա հացի գինը:

— Սինանյանը գիշերը քնել չկարողացավ, հուզված, գողգողացող ձեռքերով բացեց դուռը և ընչապառ հասավ գիմացի տանը՝ հարուստ մի մարդու բնակարանի. նա կորոտով փարվեց դրանիտ սյուներին, վորոնք խոյացել էլին վեր և իրենց վրա վերցրել տան ծածկը:

Քանդակագործը գրկել էր գրանիտը և նրա ստուգութեանից ջերմութեան էր ստանում: Տան մուտքի առջև՝ աջ և ձախ կողմերում, դրված էլին առյուծի արձանները, Սինանյանը շոյում էր նրանց բաշերը, իսկ դադանները, յետին թաթերի վրա ընկած, կարծես, թե մոնչում էլին:

Հրանուշը ամուսնուն գտավ աստիճանների վրա և աշխատեց համոզել, վոր լուսարացին գնան հոր մոտ և ներում խնդրեն:

— Պնանք, նա մեզ կյանք կտա, դու գրանիտ կգնես, աստված ունի նա, մենք ապերախտ էլինք, կխնդրենք, նա հայր է, կների:

Գուրգենը բացասարար շարժեց գլուխը — վո՛չ, վո՛չ:

Հրանուշը հույսը չկորեց:

Մինչևի վրայ, Սինանյանը նստած էր գլուխն ափերի մեջ:

Հետո համբուրեց Սուրենի աշտերը և քայլերն ուղղեց դեպի դուռս, թվում էր, թե նա փախչում է, հեռանում... իսկ դեմը ծովն էր, ալիքներ, փոթորկոտ ծովը, վորն ընկած էր քաղաքի կողքին և գիշեր ու ցերեկ մոռնում էր, վորպես վիրավոր:

Հրանուշը արթնացավ, նրա առաջին խոսքը յեղավ.— Գուրգեն, արթնացիր, վեր կաց:— Բայց իդուր, պատասխան չկար, արձագանքում էլին դատարկ սենյակի պատերը, սեղանի վրա դրված էր մի փոքրիկ դուրբյուն:

— Չեմ ստորանա նրա առաջ, կմեռնեմ, այո, բայց չեմ ստորանա, դու ևս չգնաս:— Գրված էր այնտեղ և տակը ջղային, տենդոտ ստորագրված էր,— Գուրգեն:

Հրանուշի ճակատի կնճիռները նորից կծկվեցին, կապույտը պատեց շրթունքները և դառնություն մը չինջաց— անարժան, չի ուզում խոնարհվել արժանավոր մարդու առաջ:

Նա շարունակել չկարողացավ, հորն հիշեց, սիրտը դողաց, կսկորդը սեղմեց, իսկ հետո ասելով յամբ՝ Գուրգենի հասցեյին ասաց.

— Անդառնի, անպիտան...

Այնուամենայնիվ, Հրանուշն էր մեծուք կատարեց, գրկելով փոքրիկին, հաղնելով գրոսանքի շորերը, գնաց հորը խնդրելու: Ծանապարհին հանգատացավ, մտածում էր, թե գուցե այդպես, առանց Գուրգենի, ավելի լավ լինի:

Յերկու և կես տարվա ընդմիջումից հետո, աղջիկը մոռնում էր հայրական տունը:

Այդ Մարումյանը նույնն էր, միայն, թե ավելի յեր գիրացել էր սուտ էր սովորական տեղը՝ բազկաթուղին:

Քանդակագործի ընտանիքը կանգնած էր գլխիկոր, սպասում էլին Հրանուշը թուրք կուլ տալով, հաղիվ կարողացավ ասել — հայրիկ...

— Հ'ըմ, — մեղմ, սակայն ներքին վրդովմունքով ասաց աղան և քիչ հետո արդեն ավելացրեց— աչքի միայն յեր յեղել, ասլեն... Եվ հետինդ ի՞նչ է:

Նա լիքը մսեղ ձեռքն ուղղեց դեպի փոքրիկը:

Սուրենը կծկվեց, մտավ մոր փեշի տակ և վախեցած աչքերով կոպերի տակից, նայում էր անձանոթ մարդուն:

— Մի բարկանա, հայրիկ:

Թվաց, թե աղան զգացվեց, նա քանի մի րոպե լուրջամբ խաղում էր ժամացույցի վոսկյա շղթայի հետ, սակայն քիչ հետո հնչեց նրա

բամբ ձայնը— աղջիկս, հիմի խո հասկացար — քանդակագործ, այսինքն, քար կրծող... հա՛, ողնություն ևս ուզում, լավ... շատ լավ... աղջիկս ևս, տե՛ս, չեմ խնայի, սիրտս և ցավում... բայց ահա իմ խոսքը, թող դրանց... հենց դրան և վերադարձիր, ահա...

Աղան հսկայական ձեռքն ուղղեց դեպի փոքրիկը, փայլում էլին նրա մտադրոծի, ճարպոտ, արյունախառն աչքերը և դեռ խոսքը չէր վերջացրել, յերբ լսեց լեղապատառ մի ճիշ:

Փոքրիկ Սուրենն էր, վորը վախեցած ուզում էր դուրս փախչել:

Մայրը բռնեց նրան:

Հրանուշը հայրական տանից դուրս յեկավ գլուխը կախ, յետ նայեց, գիմացը, դուռն ճակատին, մեծ ժամացույցն էր:

Ի՞նչ հուշեր էլին կապված նրա հետ, վո՛րքան ծանոթ ու հարազատ էլին ժամացույցի սլաքները, ի սլաքն ու պիտեն ու ժամեր և հաշվել գրանցող, նա նայել էր դրանց և սպասել իր առաջին սիրտ առարկային՝ Գուրգենին... ավա՛ղ... Գուրգենի դեղեցիկ դեմքը, նրա անունը՝ քանդակագործ... արվեստը, մի ժամանակ յերազանքի ու տենչանքի աղբյուր էր, ավա՛ղ... Հրանուշը ինչպես կարող էր մտածել, թե ինչ կլինեց հետո և դեռ ինչ էր լինելու...

Նա նայում էր ժամացույցին... անցած օրերը կարոտի ու զղջման հուր էլին վառում նրա կրծքի տակ:

Հրանուշն սթափվեց, ջղայնացած սեղմեց յերեխայի ձեռքը և շտապեց առաջ:

Սուրենն աշխատում էր ձեռքն աղատել, իսկ մայրը, մտքերի մեջ, կոպտորեն սեղմում էր, քաշում:

Թվում էր, թե անփական վտույթներ չէլին յենթարկվում գիտակցությունը... Ո՛ր էր գնում, չե, վոր հայրենական տունը նրան ձգում էր մադնիսի ուժով...

— Յերբ ելինք վերադարձավ, Գուրգենը տանն էր: Նա չխուսեց, իսկ Հրանուշը պատմեց ամեն ինչ:

Սոսում էր ցղային, մի տեսակ, տարրինակ— այո, մերժեցին, — ասաց նա և ավելացրեց — իսկ դու, ի՞նչ ևս մտածում... դո՛ւ...

Նա ջղային քայլերով, գնաց կանգնեց լուսամուտի առաջ, նայում էր դուրս և առանց ուշադրություն դարձնելու, թե ինչ է տեսնում, կտրում, փետրում էր ծաղկամանների ծաղիկները:

Մեխակի ժպտուն թերթերը նրա մատների մեջ տրորվելով, թափվում էլին հատակին:

Հրանուշն այնքան մեծ սիրով խնամել, աճեցրել էր ծաղիկները, հետեվել նրանց բացվող բաժանիներին, իսկ հիմա կտրում, թափում է:

... Կարծես թե վերջնականորեն խորտակվում էր նրանց մեջ յեղած կապը: Այդ բանը նրա հորը հարկավոր էր:

Աղա Մարությանը չէր ել մտածում, Վոր կարող եր աշխարհի դրոշմունս տեղծվել:

Մովորականի նման, նա աշխարհն ել նստեց սեփական կառքը և գնաց դիտելու, թե ինչպես ելին ընթանում աշխատանքները:

Աղան չափազանց անհամբեր և անհանդիստ եր. կառավարանին կարգադրում եր արգանքն և ժամ առաջ հասնել դործարան:

Նախ պեռք և սակ, Վոր մի տարի յե, ինչ Մարությանը բացել և մի նոր դործարան:

Ամեն ինչ լավ և ընթանում, սակայն դործադուլները հանդիստ չեն տալիս:

Մի քանի օր և, ինչ նրա բանվորները դործադուլ են արել, կեսը վերադարձել և աշխատանքի, իսկ մի մասը խիստ համառում և, դրա համար ել, աղան դործարանում աշխատանքի յե ընդունել կանանց, վորոնցից մի քանիսն աշխատում են, Վորպես բեռնակիր:

Մարությանը հասնելով դործարան, մարմնի ծանրության համեմատ, անսովոր ճարպկությամբ, թուով կառքից և շտապեց դրաւենյակ, սակայն դեռ աթոռին չէր նստել, յերբ աղեկաուր ձայնով հնչեց դործարանի չչափը:

Մարությանին թվաց, թե դործարանն այրվում և, դրա համար ել վազելով դեպի դուռը բղավեց.

— Ո՞վ այրեց, ո՞վ այրեց... օղնեցեք, հալար կանչեք...

Գործակատարը հանդատացրեց աղային.— վոչինչ աղա, այրող յուզը թափվեց մի թուրք կնոջ վրա և տեղն ու տեղը սպանեց նրան:

Աղան մարմնի ամբողջ ծանրությամբ ընկավ բազկաթուղին և հանդիստ շունչ քաշեց, սակայն ժամանակ չանցած, խայթվածի նման ցատկեց տեղից ու հարձակվելով դործակատարի վրա, բղավեց.

— Իմ ի՞նչ հաշիւն և, թե այրվեց, թող չայրվեր... իսկ ինչո՞ւ համար և դործարանի գուղուկը բողբոջը սրտոտում, կանդնեցրեք, շուտ... Ո՞վ և այդ շառլատանը, ո՞վ և գուղուկը տալիս...

Մեծ խնամքով փայլուն փողկապը կապած, դործակատար Արշարունին ուղղեց ակնոցները և յերկար բոյբ մեջտեղից կես անելով, կռացավ ու աղային հաղորդեց, Վոր դրությունը լուրջ և, բանվորները աշխատանքը թողել, հնչեցնում են դործարանի չչափը և հաշիւ են պահանջում այրված թրքուհու համար:

Մինչ Արշարունին կվերջացներ իր բացատրությունը, դրասենյակի դռներին ելին մոտենում բանվորական մասնայի առաջին ներկայացուցիչները:

Աղեկաուր հնչում եր չչափը և նրա ձայնը տարածվում եր քաղաքի վրա, ամենքն ել շտապում ելին աշտուղ, չչափը կանչում եր...

Գործարանի դռների առաջ հավաքված ամբոթը խանգարում եր յե ու մուտը:

Շչափն անհանգստացրեց նաև փոստիկանությանը:

Փշրեցին ապակիները—վորտե՞ղ և այդ սրիկան:

Բղավեցին բանվորները և պահանջեցին Մարությանին:

Գործակատար Արշարունին, Վորը վախից գույնը գցել եր, բացեց զլխավոր դրասենյակն անջատող ապակյա պատի լուսամուտը և դուռին աշտուղից հանելով, նայելով հայ բանվորներին, նվաղ, սակայն սուր ձայնով ասաց.

— Այդ ի՞նչ եք անում, հայ յեղբայրներ:

Արշարունին ուղղեց ակնոցները, վաթք ինչ սպասեց և ավելացրեց.

— Մի՞թե, մի թուրք կնոջ համար, դուք կարող եք վտանաւակ անել ձեւ հարազատ հայ աղայի պատիվը, ձեզ հաց տվող մարդուն, հայ յեղբայրներ... այդ ի՞նչ եք անում:

Դեռ հնչում եր չչափը և դործարանային ինստիտուտը վորտե յեր հանում, յերբ փոստիկանությունն ու կողակները սրերը ճոճելով մտան դործարան:

Արշարունու ձուր կիսատ մնաց:

Հաղթական մարմնով, թեվերը քշտած մի բանվոր, ձեռքը վեր բարձրացնելով, բռնեցրով սպառնաց ճառախոսին ու բղավեց—սրիկա յեա դու և Մարությանի վարձկան չունը, ձեր պատճառով այրվեց մի խեղճ կին, մի աշխատավոր թրքուհի, մենք բոլորս նրան մեր քույրն ենք համարում:

Հաղթամարմին այդ բանվորը Գուրգեն Սինանյանի հարեւանն եր՝ բանվոր Սեթը:

Դեռ հնչում եր չչափը և այրված թրքուհու մահվան սարսափը տարածվում եր քաղաքի վրա:

Մասսան ավելի փոթորկվեց, նրա հախուռն ընթացքի առաջ ճոնչաց ապակի պատը, լսկեց կոտորուկոյ տապկու ձայնը և բացվեցին դռները:

Սինտեղ ահից սարսափել եր Արշարունին, իսկ Մարությանը չկար:

Ոգնութեան յեկած կողակներն Արշարունուն գտան սարսափած, նրանց այն հարցին, թե վորտե՞ղ և աղա Մալումյանը, Արշարունին պատասխանեց ձեռքի շարժումով: Նա ցույց տվեց պատի մեջ գտնվող պահարանը:

Յեւ իրոք, բանալով պահարանի դռները մի անկյունում կեկված տեսնեալ աղա Մալումյանին:

Չար աչքերով այդ մարդը կատաղեց, յերբ տեսավ վոստիկանապետին:

Նա ուղղակի լալալեց—կարող եյին մեզ այստեղ սպանել, իսկ դուք վո՞րտեղ եյիք:

Վոստիկանապետը պատիւ բռնեց և ասաց — ուշացանք, այո, սակայն դրսում մեզ ևս ընդդիմացան, նրանցից մեկն արտասանեց բանաստեղծ Կոզնեցովի յերդը... «Աղատութիւնը»:

* * *

Վաղուց արդեն անհետացել եյին Սինանյանի մի քանի ընկերները, նրանք, վորոնք կազմակերպել եյին Հրանուշի փախուստը:

Գուրգենը չեր եւ ուզում հիշել նրանց, զվարճանքի և աղջիկ փախցնելու մեջ վարժված այդ մարդկանց:

Սինանյանը վաղուց արդեն նոր ընկերների շրջապատումն էր:

Նա ժամանակավորապես միայն, ընկերացել էր մի քանի դատարկախոսների հետ, այդ բանն, ի հարկե ունեցաւ իր հետեւանքները:

Բանաստեղծ Կոզնեցովը, վորը Սինանյանի վաղեմի բարեկամն էր և ուրիշ ընկերներ, թույլ չտվին, վոր քանդակագործն ամբողջովին կորցնէր իր ճանապարհը:

Ներկայումս Սինանյանի ամենամոտ մարդը, մեզ արդեն հայտնի, բանվոր Սեթոն է— նա, ինչպս իմացանք, աշխատում և աղա Մալումյանի գործարանում:

Չարմանալի ուժի տեր և Սեթը, աշխատում և որն ի բռն և այնուամենայնիվ չի հոգնում:

Մշտական ժպիտը նրա լիքն ու առնական գեմքի սովորական դարձն է:

Յերբ ընկերները տխուր են լինում, նա կատակում է.

— Մի վհառվեք, — ասում է նա ու պատմում, թե ինչպէս, իբր հայրն հիսուն տարի աշխատել և գետնի տակ, քարածուխ և հանել տանջվել, սակայն յերբեք ու յերբեք չեր ընկճվել:

— Բանը իսկական կուլի մեջ է— ասում է նա և դարձյալ հիշում էին հանքավոր հոր խոսքերը:

Այդ որը, սակայն, Սեթը տխուր էր:

Նրա վշտի պատճառը Սինանյանի նոր դժբախտութիւնն էր:

Յերկար ու մաշող հիվանդութիւնից հետո մեռել էր Գուրգենի քույրը:

Փառանձեմի թաղմանը շատ քիչ մարդ էր հաճաքել:

Փոքրիկ դադաղը վերցրած, նրանք շարժվեցին դեպի գերեզմանատուն:

Սինանյանը չնկատեց, թե ինչպէս յեղավ, վոր քրոջ դիակը դեպի գերեզման տանող մի փոքրիկ խումբը աճեց, դարձաւ հսկայական թափոր:

Նա միայն այն տեսավ, վոր Փառանձեմի դադաղի կողքից տարվում և մի ուրիշ դադաղ ևս:

Դանդաղ շարժվում եյին, իսկ բաղմութիւնը քանի դնում, աճում էր: Գուրգենը քայլում էր գլուխը կախ, առանց շուրջը նայելու: Նրա ախանջներին եյին հասնում հազարավոր վոտնաձայներ: Քանդակագործին թվում էր, թե այդ ձայները պոթթկում, դուրս են գալիս հողի ընդերքից:

Յերբ թեքվեցին, փոքրիկ բլուրը, դիմացից յերեւացին ժանդարմները, սակայն նրանք սարսափեցին, իրենց դեմ տեսնելով հազարավոր մարդիկ, վորոնք իրենց պիւրկ ուսերի վրա բերում եյին յերկու դադաղ:

Նրանք շտապեցին քաղաք, զինվորական ուժ բերելու:

Թափորը շարժվում էր, հազարավոր վոտներ դուրս եյին հողը և թվում էր, թե այդ ձայնը միավորվում, դառնում էր անխորտակելի ամբողջականութիւն, ահեղ էր...

Փոքրիկ Փառանձեմի դադաղն իր հաղթական ուսին էր դրել Սեթը, իսկ նրա կողքից շարժվում եյին այն ընկերները, վորոնք իրենց ուսերին եյին դրել Փիրուզի դադաղը:

Դա այն բանվորուհու մարմինն էր, վորն այրվել էր աղա Մալումյանի գործարանում. նրա համար էր, վոր գործարանի չչակը վոտքի չէր հանում քաղաքը:

Ահա և գերեզմանատունը: Դադաղները դրին քարերի վրա և ակսիւնց մարտական ցույցը:

Դա թաղում չեր, այլ հազարավոր մարդկունք բողոքի ձայն:

Այլոված բանվորուհու և վաղաթառամ աղջկա մարմինները տեղափոխեցին միևնույն գերեզմանում: Դա Հարազատութեան և բարեկամութեան գերեզմանն էր:

Գուրգենն Սինանյանն այդտեղ մնալու փոքրիկ համոզվեց, Վոր ինքը կորած մարդ չէր, նրան պահապանում էր բանվորական մասուն: Այդ մասին ասեցին իրենք—ճառախոսները:

Ժամանակ չէր անցել, յերբ գերեզմանոցը դարձաւ բարիկառ: Կողակները և բանվորներն իրար դեմ գնդակ ելին արձակում: Դարերով խաղաղ ու հանդիստ, մահվան շունչ փչող, վաղուց արդեն մարմարապատ, գերեզմանաքարերը կոկի դիրք դարձան:

Փիրուզի և Փառանձեմի թաղման ամբողջ գործը կազմակերպել էին բանվոր Սեթը և մյուսները, նախամտածված պլանով:

* * *

Սինանյանն առաջին անգամ դադարի ժողովի պնաց բանվոր Սեթի առաջնորդութեամբ, իսկ նրանից հետո, նա դարձաւ ժողովների մը—սակաւ մասնակիցը:

... Այդ ուրը, ժողովի նախագահը, խոսելով հետագա անելիքներին մասին, ասաց.

— Այդպես և ասում մեր Սոսոն, հարկավոր է միասնական ուժ, ժամանակն է կոկի դուրս գալ, գեներ դիմել:

Նույն աղ խոսքի վրա հայտնի դարձաւ այն, Վոր լրտեսներն իմացել էին ժողովի տեղի մասին և իրենք արդեն չըջապատված էին:

Սինանյանը նկատեց, Վոր ժողովի յեկած ընկերները, մի բոլոր, ընկաւ վարանման մեջ և կարծես խոսք մեկ արած, նայեցին նախագահի դեմքին:

— Հանգարտ, ընկերներ, առանց իրար խառնվելու— ճանապարհը մեկ է, պետք է դիմադրենք և փախուստի ճանապարհ բանանք. մեկ—մեկ դուրս յեկեք դադարի անցքից, իսկ յեթե բռնվեք՝ չգիշեր:

Այդպես էլ յեղաւ:

Դրսում խորին խաղաղ էր, գիշեր:

Սեթը և Սինանյանը գնում էին կողք—կողքի, պատերին քաշված, նույն մոմենտին էլ նրանց դեմ յեկա յերկու ժանդարմ:

Սինանյանին հաջողվեց պահել պատի անկյունում:

Ժանդարմն աշխատում էր բռնել Սեթին:

Հեռից լսվում էին հրաձգութեան ձայներ, ինչպես յերկում էր, ընկերները կոկի ելին բռնվել:

Սինանյանն ապահով էր, ժանդարմները նրան չեկին տեսնում, սակայն նա պահած մնալ չէր կարող, Սեթը բռնված էր, ժանդարմը սուրբ բարձրացնելով ուղեց խիկ: Սինանյանը մի բոլոր վարանման մեջ ընկաւ, սակայն ժամանակ չուրեք ժանդարմին: Իր մոտ պահած դաշույնը արագութեամբ բարձրացնելով նրան տապալեց գետին, իսկ մյուս ժանդարմը փախչում էր:

Գուրգենն իր կյանքում առաջին անգամ գենք էր բարձրացնում:

Դա քաղաքացու առաջին քայլն էր նրա կողմից—ինքը հետագայում այդպես էր պահապանում իր վարմունքը:

Ընկերոջն աղատելը, թշնամուն խորտակելը, Գուրգենի մեջ նոր յերկում չէր:

Յերբ բաժանվում էր Սեթից, նա խոստացաւ Գուրգենին ծանոթացնել ընկեր Սոսոյի հետ:

Հանելով տուն, քանդակագործը չգիտեր թե ինչ աներ, նա անհանգիստ էր... դրիկց վարդուն: Սուրենը նայելով հորը, ինչ վոր բան զգաց և իր փախչիկ թաթիկներով շոյեց նրա մազերը, սակայն Սինանյանը չէր հանգստանում:

Յերեմի աղ էր պատճառը, Վոր գնաց աշխատանքի սենյակը և գլուխը պիտի մեջ առնելով նուրից, նա խորհում էր:

Նրա չուրջը քանդակներն էին, վարդը իրենց փորած աչքերի խոռոչներով նայում էին հեռուն:

Սինանյանը հարապատ միջախայրումն էր, քանդակների մեջ:

* * *

Յերեմի, թե աշխարհում զարմանալի վիճինչ չկա, բայց մեթոդ զարմանալի չէ այն, վոր աղա Մալումյանն իր վտառով, Ժողոր դեմքին յեկաւ Սինանյանի մոտ, նրա տունը և առաջարկեց հաշտութեան:

Նրա հետ էր նաև Արշարունին:

Մալումյանը, վոր, դիտութեանից հաղիմ էր շնչում, կանգնած էր ձեռքերը մեջքին. նրա չուրջը պատվում էր Արշարունին և սպասում աղայի հրամանին:

Արշարունու գեներքի Ժողոր չէր հեռանում: Նա մեծ ուշադրութեամբ հետևում էր աղային և թիւում էր, թե աղ մարդը, Մալում—

ցանի կամքը կատարելու համար, յսում է նույնիսկ մագերի ծայրով:
Աղա Մալումյանը ձեռքը դեպի Գուրգենը մեկնելով, ուղղակի
ասաց.

— Արի, տղա՛ս, հաշտվենք, յես զգացի, վոր սխալվել եմ, դու իմ
հարազատն ես—սրանից ղենը, սիրելի փեսա՛, վորդի՛ս:

— Դու յել ներիր, աղջիկս:

Աղան խորհրդավոր ժպիտով նայում էր Հրանուշին:

Գուրգենը ըլուծամբ սպասում էր, թե ինչ է լինելու:

Աղան յերկար խոսեց բարեկամության ու հարազատության մա-
սին, ապա գրպանից հանեց մի բուռ վոսկի և ղենելով սեղանին ասաց.

— Ահա, Գուրգեն ջան, յեթե մինչև հիմա չեմ ոգնել, ներող յե-
ղիր:

Աղան տխրեց:

Դրանից հետո նա հետաքրքրվեց, թե Գուրգենն ինչ քանդակներ և
պատրաստում և ինչու էի կատարում պարոն Զուբարովի պատվե-
րը:

Խոսքը թափավորի արձանի մասին եր:

Աղա Զուբարովը քաղաքի ամենաանվանի հարուստներից մեկն էր.
Նա պատվիրել էր Սինանյանին պատրաստել թափավորի արձանը, սա-
կայն ինչպես մեզ արդեն հայտնի յե, արձանը կիսատ էր մնացել:

Գուրգենը վաղուց արդեն մոռացել էր նրա գոյության մասին,
իսկ այսօր աղա Մալումյանը հաշտություն է առաջարկում:

— Պարոն Զուբարովին խոսք եմ տվել, սիրելի վորդիս, վոր դու
անդա՛յման, կկատարես նրա կամքը և չուտով արձանը պատրաստ կը-
լինի:

Աղան հարազատ մարդու մտերմությամբ շոյում էր Գուրգենի ուսը
և ժպտալից նայում նրա լայն ճակատին:

— Մալումյանը ցանկացավ զնալ Գուրգենի արհեստանոցը, Գուր-
գենը մերժեց, սակայն Հրանուշը, շտապով, հորը մեկնեց բանալիները:
Նրանք իջան ներքնահարկ:

Աղայի զարմանքին չափ ու սահման չկար, հենց, վոր բացեց դու-
ռը իր դեմ կանգնած տեսավ Վլադիմիր Կուզնեցովին— բանաստեղծի
արձանն էր:

Թվում էր, թե նա կենդանի յե և ահա կշարժվի:

Աղան յետ—յետ զնաց, նա իմացել էր Կուզնեցովի մասին և տեսել
էր կախաղանի վրա:

Մալումյանն աշխատասենակի անկյուններից մեկում դառավ թա-
փավորի անավարտ արձանը, վաղուց արդեն փոշով ծածկված:

— Վերջացրու, ավարտիր,— կոտրված ժպիտը ղեմքին, առաջար-
կեց աղան և նույն մոմենտին ել միաքը փոխելով ասաց— յես կու-
ղարկեմ տեղափոխման միջոց բերելու, այս արձանը, վորդիս, թող
պատրաստվի մեր տանը, թող այնտեղ ավարտվի:

Յեմ առանց սպասելու, դառնալով դեպի Արշարունին, հրամայեց
զնալ տեղափոխման միջոց բերելու:

Գուրգենը բռնեց Արշարունու ձեռքը և վճռականորեն ասաց.

— Վո՛չ, այս արձանը վոչ մի տեղ չի գնա:

Աղան խիստ դեմք ընդունեց:

— Տղաս,— ասաց նա,— յես քեզ համար եմ ասում:

— Յես ել ինձ համար եմ ասում,— պնդեց Գուրգենը և մի մութ
վերցնելով, մոտեցավ թափավորի կիսավարտ արձանին:

— Յեթե ուզում եք, յես հենց հիմա կպատրաստեմ, կսկսեմ գոր-
ծը և չուտով կավարտեմ:

Աղա Մալումյանը ժպտաց, իսկ Գուրգենը ձեռքից փոքրիկ մուր-
ճը գետին գցելով, վերցրեց ափելի մեծը և ջարդեց արձանի թևերը:

Նա ուժգին, ահեղ հարվածներ էր իջնում արձանի գլխին և
ջարդում, փչում էր:

Աղա Մալումյանը հանկարծակի յեկավ:

Նա թափով հարձակվեց քանդակագործի վրա. ատելությունը բո-
ցավառվում էր փոքրիկ, չար աչքերում:

Նա ուզում էր վոչնչացնել Գուրգենին, հարձակվեց, սակայն իր
դեմ խոչալած տեսավ քանդակագործին, հսկայական մուրճը ձեռքին և
նույն մոմենտին ել Գուրգենը զգաց, վոր յետեվից բռնեցին իր ձեռքե-
րը:

Յետ դարձավ և տեսավ, վոր ձեռքերը բռնել են, մի կողմից Ար-
շարունին, մյուս կողմից՝ Հրանուշը, իսկ փոքրիկ Սուրենը հորը նա-
յելով լալիս էր:

Քանդակագործը կնոջ աչքերի մեջ դառն ատելություն կարդաց,
վրեժխնդրության ծարավ:

Չանցած մի ժամ, Գուրգենը ձերբակալված էր:

Նրան հետո, հարցաքննության ժամանակ միայն, հայտնի դարձավ
այն, վոր իրեն մատնել էջին Մալումյանը, Հրանուշը և Արշարունին:

Ավելի ուշ, նա իմացավ նաև այն մասին, վոր Հրանուշը հոր մոտ
զնալուց մի քանի օր անց, յերբօրոգ այցելության ժամանակ, վճռել էր

Վերադառնալ, թողնել Սուրենին ու Գուրգենին, սակայն հայրը նրան պատվիրել էր մի քանի ժամանակ եւ մնալ քանդակագործի մոտ, դա արդեն անհրաժեշտ էր... Վերջին շրջանում Հրանուշը դարձել էր հոր կամակատարը:

Բանտում Մինանյանին հայտնի դարձավ նաեւ այն, վոր ազա Մալումյանն իր տունն էր յեկել քաղաքի աղաների խորհուրդով: Նրանք վարչել էին, ինչ գնով էլ լինի, ավարտել տալ թագավորի արձանը եւ հայտարարել, թե ահա՛, տես՛ք, ժողովուրդը թագավորից դժգոհ է, նա նրա արձանն է կանգնեցնում:

Այդ վերջումն էր կատար ածելու համար էլ Մալումյանը յեկել էր Գուրգենի տունը:

Այդ եւ ուրիշ նպատակների համար էր, վոր Հրանուշը, վերջին շրջանում, մնում էր Գուրգենի մոտ, ինչպէս տեսանք իր հոր կամքով:

Մինանյանը բանտում իմացավ այն մասին եւս, վոր ձերբակալված են նաեւ իր ընկերները: Նա մտածում էր—Հրանուշը դավաճանեց, իսկ ի՞նչ յեղով Սուրենը...

Հարցաքննությունը պարզեց նրա կապը ձերբակալված բանվորների հետ:

* * *

Մայրը վորդուն չվերցրեց, Մալումյանի «դանակը» կտրել, վիշնջացրել էր մայրական ամեն մի զգացում, սակայն Սուրենը անտեք չմնաց:

Նրան իր տուն տարավ բանվոր Սեթը, վորը մի կերպ աղատվել էր ձերբակալությունից:

— Այդ ո՞րը ժողովը լինելու յեր Սեթի նոր բնակարանում:

Յերեկո յեր, սովորականի նման հավաքվում էին ընկերները, քիչ հետո ներս մտավ Նա...

— Սոսոն:

Ենթացին ընկերները եւ ճանապարհ տվին:

Ընկեր Սոսոն հանգիստ քայլերով բարձրանում էր վեր:

Նա ջերմորեն բարեւեց ընկերներին, սեղմեց նրանց ձեռքերը:

Սոսոյի ներկայությունն անհաղթելի եւ վսեմ ուժ էր ներարկում նրանց սրտերում:

Քիչ հետո արդեն նա սկսեց իր խոսքը:

Սմենքն էլ լուռ էլին:

Այնպէս էր թվում, թե ժամանակը դադար է առել եւ ամեն ինչ ըստութեամբ դարձած հետեւում է նրա խոսքին:

— Այդպէս եւ պահանջում լինին... Անդրկովկասը հեղափոխությունների ոջախ է...

— Վոչ մի զիջում թշնամուն...

Խոսում էր ընկեր Սոսոն, նա տալիս էր դործողության կոնկրետ պլան, հետագա անելիքների ծրագիր:

Ահա բարձրանում է նրա ձեռքը եւ շեշտակի իջնում է ներքեւ, աշխույժները բոցաշունչ կոլխիզացու իմաստուն աչքերում, պարզ յերպով, տեսնում են հրաբորբոք կբաղնների անմար շողերը:

Նա կյանք է ներշնչում, հաղթական պայքարի վոգի:

Սկսվում է հասարակ, ջերմ եւ միևնույն ժամանակ ամենաանկեղծ գրույցը:

— Մի ժամանակ,— ասում է բանվոր Սեթը,— յերբ յես լուրջ զիտակցութեան դեռ չէի յեկել, մասնակցում էի բուրժուական այդ լակեյների կողմից կազմակերպված դիշերային դասախոսություններին:

— Հետաքրքրական է, ինչ էլին սովորեցնում— հարցնում է ընկեր Սոսոն եւ պարանոցից հանելով սեղանին է դնում կարմիր, բժաւոր, հասարակ շարֆը: Նա թեքվում է առաջ:

— Ի՞նչ էլին ասում:

Բանվոր Սեթը նայելով նրան, ժպտում է եւ ասում— հե՛լ, ընկեր Սոսո, յես եւ Ծալիկո Դադիանին, ասա եւ Աբաս Հասան ողլին, բնեցինք մի քանի դասախոսություն. ահնոցները դրած մի պարոն, վորն անընդհատ հաղում էր եւ ամեն մի խոսքից հետո, կոկորդը մաքրում— սեղանին դրած թեյով, խոսում էր այն մասին, թե յե՞րբ, քա՞նի հազար տարի հետո, կիսավարի արեւը... Ամեն ինչ կանցնի, եւ ի՞նչ կարիք կա դասակարգային պայքարի — ասում էր նա:

Բանվոր Սեթոն ծիծաղում է:

Ժպտում փայլեց մեծ կոլխիզացու աչքերում:

Նա ծիծաղում է լիաթաք, ամբողջ հոգով, այդ ծիծաղը վարակում է բոլորին, առողջ, հեղեղ...

Քիչ հետո, կրկին կիցվում են Սոսոյի իմաստասիր աչքերը, նա սեղանի վրայից վերցրեց շարֆը, գցեց պարանոցը, փաթաթեց, ծայրերը տեղափոխեց բաջիտի տակ եւ ասաց,— նրանց սոսոր քաղաքականութեան մասին յես յարդեն ասացի:

— Խարեքայութիւնն է,— արեւը, յեթե խաղարկի, առանց մեզ հարցնելու յել կխաղարկի, կանցնի... դրանք ցնորքներ են:

Մեր նպատակն է տապալել բուրժուազիային և ստեղծել իսկական, կյանքի արև...

... Միակ ճանապարհը, ընկերներ, Անդրկովկասի աշխատախորհրդան միակ ճիշտ ուղին, ինչպես ասացի, Ռուսաստանի բանվոր դասակարգի հետ՝ կարմիր դրոշով պայքարի դնալն է:

— Այդպես է ասում ընկեր Լենինը:

Ժողովը վերջացավ:

Ընկեր Սոսոյի խոսքերը նրանց համար բացել էին հալթանակի տրշալույսը:

Միջանցքով դուրս գալիս Սոսոյին ուղեկցում էր Սեթը:

Կողքի դռնից դուրս յեկավ Սուրենը և Սեթին տեսնելով փաթաթվեց նրան: Սեթը գրկեց յերեխային և համբուրեց:

Առաջնորդը նայեց Սուրենին, Սեթի գրկից վերցրեց նրան և շոյեց այսը, ապա դարձավ դեպի Սեթը և ասաց.— Հրաշալի տղա ունես, Սեթ:

— Իմը չե.— տխուր ժպտալով պատասխանեց նա:

— Ապա ո՞վ է քո հայրը.— հարցրեց առաջնորդը, իսկ Սուրենը լուռ եր, այդ հարցը նրան անելանելի դրության մեջ դրեց, նա ուզում էր լաց լինել, սակայն զսպում էր իրեն, դրա համար ել շրթունքները դողդողում էին:

Ընկեր Սոսոն յերեխայի գլուխը սեղմելով կրծքին, մի անգամ ել հարցրեց— դե՛ ասա, ո՞վ է քո հայրը:

Սուրենը արցունքների միջից դիտեց առաջնորդին և հայելի կարողացավ ասել.

— Հա՛յրս... նրան տարան... սե կառնտով...

Ընկեր Սոսոն Սուրենի փոքրիկ գլուխը սեղմեց իր լայն կրծքին:

Սեթն առաջնորդին պատմեց ամեն ինչ: Սուրենը հեկեկում էր:

Մրբելով փոքրիկի արցունքները, ընկեր Սոսոն թաշկինակը դրեց գրպանը և ասաց.

— Հանգստացիր, փոքրիկս, հայրդ շուտով կգա: Նա անպայման կգա:

Սուրենը գլուխը ջերմորեն սեղմել էր առաջնորդի հզոր կրծքին

և սեփական ականջներով լսում էր հրաշալի սրտի զարկերը*)—

*) Մեծ առաջնորդի մասին յեղած ինչպես այս, այնպես ել հետագա նկարագրութիւնը, նյութ են յեղել հին բանվորների հուշերը, վաղուց գործել են նրա դեկավարութեամբ:

Ա. Գրիգորյան Արևի ուժը— 3:

Այդ որից անցան շատ տարիներ:

Քանի՛, քանի՛ Հերոսական ժառանգ յեղան:

Լայնամազայ յերկրի բոլոր մասերում մեծ Լենինի, մեծ Ստալինի զլխավորութեամբ ժողովուրդը մեծական գրոհի յեղաւ: Քանի՛, քանի՛ տարիներ անցան, հուժգու, Հերոսական տարիներ:

Յե՛վ յերկրի վրա ծածանվեց մեծ Հեղափոխութեան ազատարար դրօշը:

... Յեկավ ազատարար Հոկտեմբերը, նա յեկավ, վորպէս փրկարար լուսարաց, ժողովուրդն ազատ կյանք ստացավ և բացվեցին բանտի դռները:

Յերկար տարիներ բանտի խավարի մեջ մնալուց հետո, ազատութիւն ստացավ քանդակագործ Գուրգեն Սինանյանը. նա գրաւ վորդուն:

Սինանյանը յեկավ փողոց, սակայն այլևս տեսնել չեր կարող, չըջում էր ձեռնափայտով, Սուրենի ողնութեամբ:

Քանդակագործը կուրացել էր. նետելով լրանտ, նրան ծեծեցին և ստիպեցին — հայտնել ընկերների անունները:

— Ասացեք, վորտեղ և ձեր բարեկամը, բանփոր Սեթը, պահանջում էյին նրանք:

— Յես վոչ մի մարդու անուն հայտնել չեմ կարող, վորովհետեւ չեմ ճանաչում նրանց, — պատասխանում էր Գուրգենը:

Վերջին քննութեան ժամանակ, քննիչը քծծալ տվեց և ասաց.

— Սինանյանը քանդակագործ է, արվեստի, ձեպերի, գծերի, Փիգուրաների սիրահար, վորոշված է կուրացնել նրան, վորպեսզի հա՛վիտյան զրկվի իր կյանքից, քանդակելու կարողութիւնից, վոր այլևս չկարողանա փչրել թաղափորի արձանը...:

Այդպէս ել արին, քանդակագործը կուրացաւ:

Սինանյանը բոլորովին ծերացել էր:

Կուրացած քանդակագործը Սորհրդային իշխանութիւնից ստացավ կենսաթոշակ, ծաղկավետ այգի, իր բնակարանով:

Որն ի բուն ցայտում էյին շատրվանները և թռչուններն էյին դայլայլում, իրենց հոգեգծայլ յերգերը:

Սուրենը ծերունուն թողնելով, գնացել էր Մոսկվա սովորելու:

Սինանյանի զեղեցիկ տան ճակատին մարմարյոնի վրա, վոսկէ տառերով գրված էր. — այստեղ է ապրում անվանի քանդակագործ Գուրգեն Սինանյանը:

Մերունին իր ժամանակն անցկացնում էր փարթամորեն բացված ծառ ու ծաղիկների մեջ և կամ գնում էր դասախոսութիւններին:

Ամեն տեղ հարգանքով էր ընդունվում նրա ցանկալի ներկայութիւնը: Նրան սպասարկում էյին տասնյակ մարդիկ: Սակայն նրա

վիշտը խորն էր, նա յերազում էր գտնէ մի անգամ տեսնել նոր, արեւմտ կյանքը սեփական աչքերով և քանդակել... ՆՐԱ արձանը ստեղծագործել գտնէ մի անգամ:

Մասնավոր տներից և ցարական ժանդարմերիայի արխիվից գտան և հավաքեցին Սինանյանի քանդակները:

Նրա գործերի համար տրամադրված էյին հատուկ սենյակներ: Ամեն ուր հարցուրավոր մարդիկ մտնում, տեսնում էյին մեծ վարպետի պատրաստած արձանները, դիպրվում և ափսոսում էյին.

— Ծները կուրացրել են արվեստագետին:

Սինանյանը յերազում էր, գտնէ մի անգամ տեսնել և քանդակել...

Դա նրա զերազույն ցանկութիւնն էր, կարոտը, սակայն հարկավոր և ասել, վոր ծերունին մաշում էր նաև մի ուրիշ կարոտ:

Ձե, վոր Սուրենը մի քանի տարի յե ինչ գտնվում է Մոսկվայում:

Սկզբում նա սովորում էր համալսարանում, իսկ վերջին շրջանում աշխատում է զխաղան նշանակութիւն ունեցող մի շատ կարեւոր գործի վրա:

* * *

Մոսկվա քաղաքում, Մոսկվա անունը կրող զետի ափին, գտնվում է յերկհարկանի սպիտակ մի շէնք: Պատուհանները նայում են զետի արեւելք, իսկ դեմը պարտեզն է:

Տունը թաղված է ծառ ու ծաղիկի մեջ, սակայն նրա բնակիչները շատ քիչ են յերեւում պարտեզում, այնտեղ տիրող սովորական խաղաղութիւնն է:

Ինչպէս յերեւում է սպիտակ շէնքի բնակիչները չեն ուզում խանդարել բնութիւնից այդ տանը պարզեմած անհուն խաղաղութիւնը:

Սակայն ամեն ուր այդպէս չէ, սպիտակ շէնքի բնակիչների խաղաղութիւնը յերեմն խանդարվում է:

Իսկ այդ նշանակում է, վոր Ուրբան յերեմացել է այնտեղ:

Նա դալիս է հանկարծակի և փոթորիկ և բարձրացնում:

Վոչ շատ բարձր և վոչ շատ զեղեցիկ, սակայն աշխուժ, գրավիչ մի կին է նա:

Վոսկէթի մազերով պսակված գլուխն այնքան անհանգիստ է, վոր մազերը յերբեք իրենց տեղը չեն մնում և անընդհատ թափվում են նրա աչքերին:

Ուրբան թեթեւ թռիչքով մտնում է սպիտակ տան պարտեզը. նա

կանգնում և ծառի ստվերում և հանկարծ հնչեցնում է ջութակի յերգը:

Այդ նշանակում է— բարեւ ձեզ, յես արդեն յեկա...

Լսելով ջութակի ձայնը Անդրեյ Սերգեյիվիչը լուսամուտից դուրս գլուխ է հանում և ձեռքով վողջուռնում է նրան, սակայն Ուլան նվազը չի դադարեցնում, մինչև վոր չեն բացվում Սուրենի տենյակի պատուհանի փեղկերը:

Քիչ անց, այնտեղից յերեւում է Սուրենի գեմքը, Ուլան անմիջապես թողնում է նվազը և վազում դեպի վեր:

Նա շուտով դառնում է նրան և բռնելով ձեռքը ստիպում է դուրս գալ:

— Մի քիչ ել հարկավոր է հանգստանալ,— ասում է Ուլան և քաշում, իսկ Սուրենը համառում է— հանդիստ յեղիր Ուլա:

Ուլան պնդում է.— փո'չ, մի քիչ պետք է հանգստանա:

Մեղ թվում է, ընթերցողն արդեն հասկացավ, վոր Սուրենը մեղ հայտնի քանդակագործի վորդին է, վաղուց արդեն մեղ ծանոթ Սուրենը:

Սակայն, արդեն դժվար է նրան ճանաչել:

Դանի'—քանի' տարիներ են անցել. նա արդեն բոլորովին փոխվել է, դարձել է լայնաթիկունք, սև ու գանգուր մագերով մի աղամարդ:

Այն փոքրիկ Սուրենը ներկայումս դարձել է ընկեր Սուրեն և ունի պրոֆեսորի կոչում, իսկ յեթե լավ նայես քուրբերին, կնշմարես սպիտակ մագեր:

Տարիները փոխում են մարդուն, յերկրի վերածնունդի և դարդացման հետ աճեց նաև Սուրենը:

Նրա արտաքինը նկարագրելիս յերբեք և վոչ մի դեպքում չպետք է մոռանալ սպիտակ խալաթը, վոր նրա անբաժան մասնիկն է:

Դա նրա աշխատանքի զգեստն է:

Սուրենի բնորոշ գծերից մեկն էլ այն է, վոր նրա աչքերից սուլում է լուսան մեղմ և բարի ժպիտն անպակաս է լինում:

Ուլան աշխատում է Սուրենի հագլից հանել խալաթը, իսկ նա ընդդիմանում է:

— Թաւորնում աչոր յերդում է Առլովան — դնանք Սուրեն, Անդրեյը նույնպես կգա, յես վստահ եմ:

— Վո'չ, սիրելիս, դու գնա, իսկ յես գրադված եմ, կամ գնացեք դու և Անդրեյը... Յես շատ եմ դրադված, խնդրում եմ...

Ուլան թեմէ տակից հանում է ջութակը դնում պատուհանի գոգը և շարունակում է համոզել:

Սպիտակ տան հիմնական բնակիչները, ինչպես տեսանք, յերկուսն են, Սուրենը և Անդրեյը: Նրանք ունեն բազմաթիվ ուսանողներ, բայց սխալ հասկանալով, սպիտակ տունը վոչ թե բնակարան է, այլ լաբորատորիա, սակայն նրա աշխատակիցները համարյա ամբողջ ուրը լինում են այնտեղ:

Սպիտակ տունը ակնարկական—գիտահետազոտական ինստիտուտի բաժանմունքն է, վորը տրամադրված է պրոֆեսոր Սուրեն Սինանյանին և նրա ողնական Անդրեյ Սերգեյիվիչին:

Սպիտակ տան խաղաղությունը խանգարող Ուլան, Սինանյանի կինն է: Ուլան վերջացրել է յերաժշտական բարձրագույն դպրոցը, նա, մի ժամանակ, աեքստիլ գործարանի բանվորուհի յեր, իսկ ներկայումս ճայնագրում, ստեղծագործում է:

* * *

Ջարմանալի բան է մարդկային աչքը, վերին աստիճանի նուրբ և նույնքան ել բարդ:

Հին հույները աշխարհի ամենաթանկ բանը աչքն են համարել և նրանք այդ բանում չեն սխալվել:

Յերը անսահմանորեն սիրում էր մեկին և ուզում էր արտահայտել այդ, ուրիշ ավելի հարմար խոսք չեք գտնում, քան ասել—աչքի լույսը:

Կամ ուզում էր մեկի անսահման բարեկալությունը ցույց տալ և ասում էր— նա իր վորդուն նայում է աչքի լույսի պես:

Մարդու համար աչքն անգնահատելի յե, սիրելի և դա պարզ է, Չե՞ վոր նրա միջոցով էս տեսնում չըջապատդ, ընկերներիդ, կյանքդ, սիրելիներիդ:

Անսահման թանկ է մարդկային աչքը—նրանով տեսնում էք ծագիլները, խնդությունը, դարուն էք տեսնում և տեսնում էք թշնամուն, նրան բնաջնջելու համար:

— Ո՛ր, անգնահատելի յե մարդկային աչքը:

Բայց ի՞նչ անեն այն մարդիկ, վորոնք զրկված են աչքից,—Դուք, վոր ունեք հրաշալի աչքեր, մտածե՞լ էք արդյոք, այդ մասին:

— Մարդը չի տեսնում,— կա՞ ավելի մեծ վիշտ, քան այդ է:

Յե՛կ կա՞, արդյոք, ավելի մեծ գործ, քան այն, վոր լինի մեկը:

փորպետի կույրերին լույս տա, նրանց աչք չնորհի:— չեմ կարծում: Ենթ յեղան մարդիկ, վորոնք իրենց ուժերը փորձեցին այդ ուղղու- թյամբ: Դրանք մեզ հայտնի Սուրեն Սինանյանը և նրա ողնական ընկեր Կնդրենյն են:

Չե՞ վոր Սուրենը ակնարույժ է:

Շատ հուզիչ է այդ պատմությունը:

Յերբ Սուրենը մարդ դարձավ և ավելի խորը կերպով զգաց հոր գոթախտությունը, դիմեց բոլոր բժշկներին, վորպետի բժշկին հո- րը:

Պետությունը մտածեց այդ մասին:

Մակայն իզուր, բժշկները միաբերան հայտարարում էին, թե հնարավոր չէ բուժել քանդակագործին, քանի վոր նրա աչքերի վո- րոնանկները, ախտոլության ապարատի հիմնական մասը, փչացած են: Հարկավոր են նոր բիբեր, իսկ այդ հնարավոր չէ, հարկավոր է փո- խել վոսպունակը...

Սուրենը սիրում էր բժշկական գործը: Հոր վիճակը սախկեց նը- րան ընտրել ակնարուժական ճյուղը: Ներկայումս նա անխնի ակնա- րույժ է և միևնույն ժամանակ բժշկական դիտություններին տիրապե- տող մարդ: Վերջացրել է յերկու համալսարան:

Հենց ուսանողական սեղանից Սուրենը մտածում և դիչեցնեբր չէր քնում—մի՞թե չի կարելի լույս չնորհել կույրերին, այնպես, վոր փոշ մի կույր չլինի, այնպես, վոր հայրիկը կարողանա տեսնել:

Որեք ու տարիներ շարունակ Սուրենն այդ էր յերազում:

Նա տերապետեց շատ լեզուներ և կարգաց բոլոր այն դրքերը, վո- րոնք դրված էին աչքի մասին, բայց ի՞զուր... փոշ մի տեղ չգտավ աչքի փոսպունակը փոխելու, մարդուն նոր աչք չնորհելու մասին վերջնական խոսք:

* * *

Սուրենի բարեկամը, նրա աշակերտը Կնդրենյը փոչնչով չէր զե- չում նրան:

— Անդրե՛յ, դու քիչ է մնում, վոր պերապանցես ինձ, — հաճա- փափի ասում է Սուրենը և մտերմորեն նրա ուսին խփելով շարունա- ւում:

— Հին ժամանակներում, մի անմասն բժիշկ է լինում, այս բժիշ- կը մի աշակերտ է ունենում, չափազանց ուշիմ և բանխաջ է լինում

այս աշակերտը, ճիշտ քեզ նման (Կնդրենյը ծիծաղում է):

Այս բժիշկը տեսնում է, վոր աշակերտը գալիս, իրենից անցնում է, որոտւմ նախանձովում է:

Մի անգամ, բժիշկը բանում է հիվանդի գոնգի կախարիչը և աշ- խատում է ուղեղի մրայից ունելիով վերցնել այնտեղ նստած տարորինակ կենդանուն, բայց արի տես, վոր անտրտանք ճանկերը խրել է ուղեղի մեջ և պոկ չի գալիս: Վարպետը մնում է չվարած, յիթե անախտանին դուրս քաշի, ապա փնաս կապտճառի ուղեղին, իսկ յիթե թողնի, այլևս ի՞նչ բժշկություն, չե՞ վոր հիվանդը տանջվում է:

Այդ մոմենտին վրա յե գալիս աշակերտը և ասում է—բժիշկ, մա- շան տաքացրու... և իրոք, յերբ տաքացնում են ունելին, կենդանու ճանկերից ուղեղն ազատվում է:

Բժիշկը մտածում է, թե ինքը հեռ է մնացել, իր աշակերտն իրենից շատ բան դիտե և գի՞տեք ինչ է անում:

— Հավանական է— նախատրում է աշակերտին—ասում է Ոլգան և ժպտում:

— Վո՛չ, նա դնում է կախում է...

— Ա՛յ քեզ բան, ասում է Կնդրենյը, իսկ Սուրենը, բարձրաճայն ծիծաղելով, խփում է նրա ուսին և ավելացնում:

— Այնպես, վոր՝ զգույշ յեղիր:

— Խիստ համարձակ և իսկապի ստաճարկությունները նախանձա են շարժում:

Բոլորը միաբերան ծիծաղում են, իսկ ոտդիւն հնչեցնում է մի կայտառ պար:

Սուրենն ու Ոլգան սկսում են պարել:

Կնդրենյը մենակ է, նա ստիպված վերցնում է մի աթոռ և դրկելով այն, սկսում է պար գալ— դամանները պակաս է, ինչ անես:

Քիչ հետո, Ոլգան պարելը թողնելով, հեռ է գցում ճակատին բն- կած մազերի փունջը և ասում.— Սուրեն, ժամանակն է, վոր Կնդրենյը ամուսնանա, այնպես չե՞:

— Ճիշտ այդպես է:

Սուրենի փոխարեն պատասխանում է Կնդրենյը և աթոռը դնում մի կողմ:

Նորից հնչում է աչխաժ ծիծաղը:

Իզուր չանցավ Սուրենի և Անդրեյի յերկար աշխատանքը: Սպիտակ խալաթը հագած Սուրենը նստել է աթոռին, կոթնել սեղանի վրա: Անդրեյը ոպերայիսն գործիքները պատրաստ պահած սպասում է նրան:

Սեղանի վրա դրված է ամեն ինչ, այն բոլորը, ինչից ստեղծվում է մարդկային աչքը:

Նրանք մի քանի անգամ փորձեր են կատարել կենդանիներին վրա և մեծամասամբ անցել է հաջող, կուրացած կենդանիներն աչքի լույս են ստացել, սակայն տեսողութան ասպարաատի ներքին մասը դեռ պահանջում է վերոջ ուսումնասիրություններ:

Սուրենի և Անդրեյի ուրախությանը չափ ու սահման չկա: Նրանց աշխարհահռչակ գյուտի մասին գեռես շատերը չգիտեն:

Այդ մասին գիտեն միայն մոտ բարեկամները:

Նրանք սպասում են, ավելորդ աղմուկի կարիք չկա, թող վերջնա-կանապես պարզվի:

— Սպիտակ տան մարդիկ անընդհատ աշխատում են, մտածում:

... Ու մի գիշեր էլ, յերբ Մոսկվա գետը հանդարտ հոսում էր, դնում հեռու-հեռուները և աստղերն էյին ժպտում, իր սենյակից դուրս յեկավ մի մարդ ու վաղեց:

Սարգը կրծքի կոճակները չեր կոճկել, դւխին գդակ չկար և ամեն ինչից յերեվում էր, վոր նա շտապում էր:

Դա Անդրեյն էր. նա հասավ Սուրենի բնակարանին և ուժգնորեն թակեց լուսամուտի ապակիները:

Պատահանը բացեց Ուլան— Հը', ի՞նչ է պատահել:

— Գտա՛, գտա՛. — բղավում է յերիտասարդը և աստիճաններով բարձրանում վեր:

Նա Սուրենին գտավ անկողնու մեջ և անմիջապես պատմեց.

— Վերջապես հաջողվեց... յես կարողացա գտնել այն ուժը, ինչ կա-րող է մեր հաջողությունն ավելի հաստատուն դարձնել— նա հուզված պատմում էր:

— Գտար և այն էլ գիշերով:

— Մի զարմանա, յես վաղուց արդեն գտել էյի... սակայն կա-կածում էյի և հա պարզվեց...

Սուրենը ջերմորեն սեղմեց նրա ձեռքը, իսկ հետո ժպտաց, նայեց Ուլային և ասաց. — Ուլա, ես չեյի ասում, վոր հին հուսա-տանցի բժիշկը նախանձելով իր աշակերտին... ինքնասպան է յեղել:

— Տեսնում ես, յես գտա աչքի փչացած վոսպունակի փոփոխման

ձեւը, իսկ նա— դա արդեն դերագանց է, հնարավորություն և ապիս փոխել ամբողջ աչքը:

Իսկ այդ նշանակում է... վերացնել կուրությունն ընդհանրա-պես... դուք հասկանում եք...

Հետաքրքիր պառավ է սպիտակ տան տեխնիկական աշխատողը: Նա զարմանալի կին է, շատ է սիրում խոսել իր մասին և պատմել իր առավելությունները:

Պառավի կարծիքով, Մոսկվայում, և ինչու միայն Մոսկվայում, այլև ամբողջ աշխարհում, իր նման մաքրող չկա:

— Ո՛ր, իրեն շատ է գովում Նատաշա Գավրիլովնան և նա իրա-վունք ունի: Չե՞, վոր նա չի կարող հանդուրժել, վոր հասակին ընկած լինի անգամ թղթի մի փոքրիկ կտոր:

Պառավը զրուցասեր կին է և ով նրա հետ խոսեց, պետք է համ-բերություն ունենա միայն լսել. դրա համար ել շատերը չեն, վոր համաձայնվում են Նատաշային զրուցակից լինել:

Սակայն կա մեկը, վորը սիրով լսում է պառավ Նատաշային և միշտ ել հավանության նշան է անում, շարժում է գլուխը.

— Դուք ճիշտ եք, քույրիկ:

Դա Արինա Ստեպանովնան է (ընթերցողը թող չմոռանա այս անու-նը, նա հետագայում մեզ պետք է):

Մի պառավ, վորի համար թվում է, թե աշխարհի ամենամեծ հա-ճույքը Նատաշային լսելն է:

Յերեվի այդ է պատճառը, վոր Նատաշան ուղղակի սիրահարվել է Արինային:

Նրանք հաճախակի նստում էյին սպիտակ տան պատերի տակ պատրաստված նստարանների վրա և Նատաշան պատմում էր:

Նատաշան, հաճախակի, Արինային առաջնորդում էր, դեպի սպի-տակ տան ներսը և մեծ հպարտությամբ բացատրում, թե վոքտեղ տակ տան ներսը և մեծ հպարտությամբ բացատրում...

Ինչ է դրված, ո՞վ, վոր սեղանին է նստում... Նա պատմում է այնպիսի տոնով, վոր կարծես, թե սպիտակ տան

թերն ինքն է և ամենքն ել ղեկավարվում են նրա հրամանով և վոր թերն ինքն է և ամենքն ել ղեկավարվում են նրա հրամանով և վոր թերն ինքն է և ամենքն ել ղեկավարվում են նրա հրամանով... այդպես և Նա-տաշան:

Սակայն պետք է ասել, վոր պառավը Սուրենին շատ է հարգում,

դրա համար եւ բոլոր պատմութիւնները վերջացնում եր նրան գովելով:

Արինան լսում եւ և զարմացական նշաններ եւ անում, այդ բանը պառաւիրն չստիպանց դուր եւ գալիս, դրա համար եւ նա ավելի յե վողելովում:

* * *

Մի որ եւ կատարվեց անպապելի բան:

Սուրենը, Անդրեյը և Ոլգան հեծանիւներով գնացել էյին շրջելու նրանք վերադառնում էյին, յերբ նկատեցին, վոր սպիտակ տունը հրդեհվում եւ:

Նրանք այնպեղ հասան քրտինքի մեջ կորած, տունը բռնկվել եր բոլոր կողմերից:

Սուրենն ու Անդրեյը իրենց նետեցին կրակը, նրանց արգելում էյին, վորովհետեւ վոչ մի ոգուտ սպասել չէր կարելի, տունն այնպես եր բռնկվել, այնպես էյին հրդեհել, վոր առաջին հերթին այրվում էյին կարեւոր կարիներները:

Այնուամենայնիւ, Անդրեյն իւր նետեց կրակը:

Նրան այնտեղից դուրս հանեցին այրված, ծանր վերքերով:

Սուրենի աչքերից ընկան արցունքի կաթիլներ:

Մեծ եր նրա վիշտը:

Այրվել, կրակի ճարակ էյին դարձել գիտական այն բոլոր նախադէրն ու նյութերը, վորոնք Սուրենը և Անդրեյը կարողացել էյին յերկար ժամանակ աշխատելով ձեռք բերել:

... Այդ դեպքից որեր անցան կատարվում եք քննութիւն:

Սուրենն ու Անդրեյը ստիպված էյին սկսել նորից:

Սակայն Անդրեյի հիվանդութիւնը խանգարում եր:

Բժիշկները նրան խորհուրդ էյին տալիս, վորոչ ժամանակ թողնել աշխատանքը և հանգստանալ:

— Սուրենը հորը շատ եր կարոտել, նա քանդակագործին բերեց Մոսկւա, բացի գրանից, Սուրենը նպատակ ուներ: Նրանք արգեն վերսկսել էյին իրենց աշխատանքը:

Փութեկն Սինանյանը Մոսկւայումն եր:

Այնպեղ արգեն լսել էյին նրա մասին և շատ արիւնքաւորներ դայիս էյին նրան տեսութիւն:

Հաճախ եր պատահում, վոր հայր ու վորդի, մենակ մնալով, հիւշում էյին անցյալը: Փութեկն վորդու ձեռքը բռնելով շոյում եր և ասում. — Սուրեն, թանկագին գալակա, բոլոր իղձերս կատարում են

տուել. միակ ցանկութիւնս եւ գոնե մի անգամ տեսնել լույս աշխարհը և քանդակել գոնե մի անգամ... Պատրաստել նրա արձանը... մահւա-նիցս տուաջ, աչք եւ ցանկանում:

Սուրենը լսում եր հորը, նայում եր նրա ծերացած, գունատ դեմքին և յերկար ու մանրամասնորեն պատմում իր և Անդրեյի նոր հայտնութիւն մասին:

* * *

Դալով Մոսկւա, Սինանյանը ամենից շատ կապվեց Ոլգայի հետ: Ներուներն, ի հարկե, Ոլգային տեսնել չէր կարող, սակայն գեմքը առաջ ուղղելով, գոնա մասներով շոյաւիում եր նրա փափիկ ձեռքը և ասում.

— Նվագի՛ր, աղջի՛կս...

Ոլգան նվագում եր իր վերջին ստեղծագործութիւններից: Նա հնչեցնում եր Բեթհովենի յերգը...

Քանդակագործը լսում եր, իսկ հետո, ձեռքերն առաջ պարզելով, ձերուանգարդ դուլար հետ դցած, գնում եր արձանների սրահը և կույրերին հատուկ քնքշութեամբ շոյաւիում եր:

Նա սրտով, էյութեամբ, ապրում եր, զգում:

Ահա արձանները՝ գծեր, ձեւեր էյութեան, արվեստ:

Մերանուն այրում եր ստեղծագործելու, քանդակելու անպոսպ ծառայութիւն: Սուրենը տեսնում եր այդ և տանջվում եր:

... Կես դիշեր եր, Սինանյանի բնականորէ քնած եր, սակայն լուսամտի մոտ նստած եր Ոլգան:

Նա յերաժշտական նոտաների մեջ խորատուգլած, ուսումնասիրում, գրում եր, հետո, վերցրեց ջութակը և գիշերային լուսութիւն մեջ նախ մեղմ, հանդարտ, քնածներին չխանդարելու համար, իսկ հետո, ինքնամոռացութեան մեջ, ընդոստ, ամբողջ թափով, հնչեցրեց յերգը:

Չութակի սրտից թռչում էյին կայծերը, հոգու, ստեղծման և կարոտի ձայները:

Բոցիկւում, աղմկում, այրվում, բռնկվում և շողջողում էյին... ձայները...

— Չայնե՛րը... դրանք դուրս էյին գալիս յերկրի անհուն կապույտից, գիշերվա լուսութիւնից... բարձրագահ սարի, մեղմ հովիտ, նրանց մեջ, ջրվեժների թափը և ջերմութիւնն արեւի:

Կարոտը փողփողում եր:

Դողդողում եր ջութակը... նորից ձայներ, դույնե՛ր, գույնե՛ր:

Ոլգան նվագում եր, ձայներն ուժեղանում էյին, նրանք, վորպէս բաղնիք, բանում էյին ճանապարհը և թեմատարած սրանում գեղեկաւոր, դեպի իղձը—սերը:

Նա վերջացրեց նվագը. կանչած եր լուս, խորին մտքերի մեջ, կից սենյակի դուռը բացած, բոբիկ վտանքով, գիշերային հազուտաւով

Անհաճ էր քանդակագործը: Թվում էր, նայում էր Ոլգային:

Ոլգայի լարված դիմադները, փոքրիկ, նուրբ շրթունքները, խո-
հեմ աչքերը կարծախան թուփչանքն էյին պարփակել իրենց
մեջ:

— Ոլգա՛, զավակս, այդ ի՞նչ էս նվազում — լուսթյունը խզելով
հարցրեց ծերունին:

Ոլգան շփոթվեց, սառնություն զգաց և նույն մոմենտին ել վազեց
առաջ, գլուխը սեղմեց ծերունիի կրծքին:

Ծերունին կանգնած էր բոլորովին սպիտակ, ձյան նման փայլող
մազերով: Լայն, բարձր ճակատը չողջողում էր:

— Թանկազինս, աղափնյակս, այդ ի՞նչ էյիր նվազում...

— Ուզում եմ, հայրիկ... կարծախ, սիրո յերգն էյի նվազում...

Առաջնորդի մեծ սիրո յերգը ժողովուրդն այդ յերգն է ուղում...

Յես փորձում եմ հայրիկ...

— Դու յե՞լ, զավակս, դու յե՞լ... Ո՛ր, ստեղծագործ ուժերի հրա-
թե մխաբ: Սեղմվիր կրծքիս, այդպես, մոտ, մո՛տ, լավ է, այդպես...

Ախ, աչքերս... կատարվեր յերազս...

* * *

Սուրենն ու Անդրեյը գործը նորից սկսելով, մի քանի ամիս է ար-
դեն հասել էյին իրենց նպատակին, սակայն վոչ լրիվ չափով: Վերա-
կանգնված էր միայն աչքի փչացած բիրը փոխող միջոցը, իսկ ամբողջ
խնձորակը, այսինքն Անդրեյի կարեվոր գյուտը, կույր մարդուն բոլո-
րովին նոր աչք պատրաստելու միջոցը, դժվար էր վերականգնել:

Անդրեյը տանջվում էր:

Նրանք ուրախ էյին, վուր ծերունին հնարափորություն կուեննա
տեսնել, իսկ այն կույրերը, վորոնք բոլորովին նոր աչքի կարիք ու-
են...

Նրանք աշխատում էյին, հարկավոր էր դառնել բոլորովին նոր աչք
ստեղծելու կորսված միջոցը...

* * *

— Յերեկո յեր, յերր Սուրեն Սինանյանի աշխատատեղիի դռանը
կանգնեց մարդատար մի ավտո:

Չանցած ժամանակ, այնտեղից դուրս յեկավ մի յերիտասարդ և
չտապով բարձրացավ վեր: Նրա յետևից գնում էր նաև մեկ ուրիշը:

Կանոնեցին դռան առաջ և պատրաստվեցին դանդահարել, սակայն
դուռն ինքն իրեն բացվեց:

— Համեցեք, մենք ձեզ նկատեցինք հեռվից, — ասաց Սուրենը և

ճանապարհ տվեց:

Բարեկամները ջերմորեն բարեվեցին, հարցրին իրար առողջո-
թյուն, ապա նորեկը, նստելով բաղկաթոռին, դիմեց Սուրենին ու
Անդրեյին և ասաց:

— Հը, տղե՛րք, գործն ի՞նչպես է, դուք դրանից պատմեք:

Նորեկը ժպտում էր և ճակատի վրայից յետ գցում մադերի փուն-

ջը, վորը հաճախ ընկնում էր նրա լայն ճակատին՝ ձախ կողմից:

Թկավեց դուռը:

— Սուրեն, ուրեմն, ավարտված է ամեն ինչ, — հրաշայի յե:

Հա՛, լսեցի, վոր անցյալ ուրը, զեկուցել էս ավտո գործարանի բան-
վորական ընդհանուր ժողովում, պատմում էյին մեծ գոհանակությամբ:

— Իսկ վաղը բժիշկների քաղաքային ժողովում իր նոր աշխատու-
թյունն է կարգալու ընկեր Անդրեյը:

Նորեկը նայեց Անդրեյին և հարցրեց, — իսկ յե՞րբ էս հանձնե-
լու տպագրության, իսկ այն գյուտը...

— Շուտով, խմբագրում է ընկեր Սինանյանը, — Անդրեյը հարգա-
լից նայեց Սուրենին:

— Լսել եք, կարծեմ, Յեվրոպայի գիտնականները զարմացել են -
Ձեր գիտական նոր հայտնությունը գրավել է ամբողջ աշխարհի առաջ-
դըրությունը, իմացել են թերթերից:

Զրույցը յերկար տևեց. նրանք նստած էյին բաղկաթոռներին, մեջ
սեղը դրած սեղանի վրա փռված էյին պլանները, վորոնք ելեկտրակա-
լույսի տակ արտակարգ փայլ էյին ստացել:

Սուրենը բացատրում էր:

Նորեկը Սինանյանի անից հեռացավ, յերբ արդեն ուշ դիչեր էր:
Նա սեղմեց յերիտասարդ գիտնականների ձեռքերը:

— Տղերք, Անդրեյ, պատվի խնդիր է, մեր վեհ հաղթանակի փա-
ռավոր մջերից մեկը, այնպես արեք, վոր գործն անթերի լինի, փորձի
առաջին ուրը յես կլինեմ Ձեզ հետ:

Նա գնաց. նորեկը քաղաքային կուսակցական Կոմիտեյի քարտու-
ղարն էր, վորը ժողովը վերջացնելուց հետո չտապել էր Սինանյանի
աշխատատեղի:

Նա այստեղ լինում է հաճախակի:

Յերիտասարդ գիտնականները կանգնել էյին դեպի դուրս առանդ
պատշգամբում, դեմը քաղաքն էր, մեծ Մոսկվան:

Հանդիստ և իմաստուն գիշեր էր, մեկն այն գիշերներից, յերբ

բեղմնավոր աշխատանքից հետո, հանգիստ եւ սոննում եւ գիտեալ, զոր
քո կյանքը հարկավոր է, նա միլիոններինն է...

Իրար կողքի կանգնած ալյուպեա ելին զգում Սուրենն ու Անդրեյը:

* * *

Նրանք Պատրաստվում էին կատարել առաջին փորձը:

Սուրենը յերեկոյան տուն յեկավ սովորականից մտահոգված եւ ան-
միջապէս գնաց հոր մոտ: Նրա հետ եր նաև Անդրեյը:

Նա հորը վաղուց արդեն հայտնել էր իր մտքերը, սակայն քանդա-
կապորձը զժվարանում էր հալատալ, չնայած նրան, զոր վորդու վար-
պետութիւնը նրան հուշս էր ներշնչում: Սակայն զժվարանում էր հա-
վատալ, այն բանին, զոր կարող է պատահել, զոր ինքը մի անգամ էլ
չուշս տեսնի:

Պատրաստվում էին:

Վիրահատման նախարդ գիշերը Սուրենը բոյոսովին չքնեց:

Նա տանջվում էր— գուցե հայրը մեռնի...

Դյուռի առաջին փորձը կատարելու յեր հոր վրա:

Նա տանջվում էր, սակայն միենուշն ժամանակ վստահ էր:

Սուրենը չէր քնում... նա շրջում էր եւ ծխում, սենյակը լցվել
էր ծխով:

Ողջան պատուհանը բացեց, սակայն չուզեց արդելել Սուրենին:

— Թող ծխի,— մտածում էր նա:

— Առտվոտայն կատարվեց վիրահատումը:

Բոլորին էլ հայտնի յեր, զոր Սուրեն Սինանյանն իր գյուռի ա-
ռաջին փորձը կատարելու յե հոր վրա. թերթերում գրվում էր գրա-
մասին:

— Գուցե թե հայրը մեռնի...

Սուրենն ու Անդրեյը գիշերները չէին քնում:

Մեկ ամիս պէտք է անցնէր, զոր պարզվէր, հաջող էր, թե վոչ:

Հիմնականուցային մահճակալի վրա պառկած էր անվանի քանդա-
կապորձը: Նա գունատ էր եւ դալուկ:

Բոյոսըն էլ սպասում էին, թե ինչ է լինելու:

* * *

Գամված մահճակալին, կառողջանա թե վոչ,— բախտորոշիչ միտ-
քը գլխում, Սինանյանը մի անգամ եւ հիշեց իր անդարձ կերպով ապ-
քած կյանքը:

— Ի՞նչ յեղավ շրանուշը, զորտե՞ղ ե նա,— այս միտքը ստվերի
նման, հիմնականուցային մահճակալի համարյա անշարժ ստվերի նման,
չէր հեռանում նրանից:

Գանդակագործը ամեն ինչ վերհիշեց սկզբից:

— Կի՛ն,— մտածում էր նա,— ահա թե ո՞վ էր... Նա խենթա-
նում էր, գլխում, համբուրում աչերս, յերգվում, զոր աշխարհում,
այդ աչերից թանկագին աչերն նրա համար չկային, իսկ հետո՞, նույն
այդ կինը, կուրացնել ամեն նույն այդ աչերը.— ահա թե ով էր
նա:

— Ալյուպեա ե լինում, յեր խաբվում են մարդիկ, յերը հավա-
տում են շրանուշի նման կնոջ շրթունքներից շոայլվող խոստում-
ներին:

— Սե՛ր,— ե ինչպիս եւ վաճառում նույնիսկ սերը:

— Սակայն զորտե՞ղից, ո՞ւր գնաց նա, ի՞նչպիսի դաժան փոփո-
խութիւն: Նա ստացավ նոր կերպարանք, բայց միթե նո՞ր. չէ, զոր
հենց սկզբից, նրա մեջ խոսում էր այն, ինչ հետո, վերջում, յերեկաց,
վորպէս բացարձակ ճշմարտութիւն:

— Այո՛, հենց սկզբից նրա մեջ խոսում էր ինքը՝ փառասիրու-
թեան թաղավորութեան տեսչը, բուրժուական բարիքներով լեցուն ար-
տասովոր մարդու կին յիսելու սովորական տեսչանքը:

— Այո՛, զորոչ ժամանակ նա գիշեց, ամիկին, ինձ հետ յեկավ
աղքատութեան դուռը... Սակայն ալյուպեայից էլ բաժանվեցին մեր ճա-
նապարհները:

Նա ջանում էր ինձանից պատրաստել այն ինչ ինքը ցանկանում
էր:

— Նա սարսափեց, չէ զոր փչրվել էին հուշները:

Վախեցաւ պրոքստարիատի պայքարից ու ընդդիմացաւ:

Յեւ պարզ է, գլորվեց, այսինքն գնաց այնտեղ, ուր նրա տեղն էր:

— Բայց չե՞ վոր նա մայր եր... մա՛յր, դուցե, թե նրա մեջ մնաց վերջին այդ սրբութիւնը:

Յեւ ո՞վ է տեսել, վոր մայրն այդպիսի դաժան վարք ունենա, լքի սեփական վորդուն:

Մերունի քանդակագործը, մահճակալի վրա պառկած մտորում էր:

Նա կարդացել էր բազմաթիւ գրքեր, բայց վոչ մի գրքում չէր հանդիպել այդպիսի մոր:

Յերեմի, թե այդ ամենը նրանից է, վոր մայր հասկացողութիւնը մարդիկ միշտ եւ, պատկերացրել են, վորպէս անողորմ սրբութիւն:

— Յեւ իսկապէս, Սինանյանը հիշում էր, թե ինչպէս տարիներ առաջ, հանդիպեց մի լավ ընկերուհու:

Կինն իր ամուսնու հետ բանտ էր ընկել: Նրանց յերկուսին եւ ձերբակալել էր ցարական ժանդարմերիսն:

Ամուսնուն աքսորեցին: Կինն իր անդրանիկ գաժախն ունեցաւ բանտի մեջ և նրան կանչեց հոր, այսինքն ամուսնու անունով:

Շատ տարիներ հետո, ամուսինները կրկին հանդիպեցին իրար և նրանց մեջ միջն էր արեւի պէս վառ եր սերը:

— Այո, իսկական ընկերը, կինը, այդպէս է լինում:

Կին եւ կա, կին՝ եւ:

— Բայց ահա և կան դաժան մայրեր, — խորհում էր ծերունին և կրկին հիշում Հրանուշին:

Բանտում յեղած ժամանակ Սինանյանը Հրանուշին հաճախակի հիշելու առիթ ուներ, վորովհետեւ նրան արդեն հայտնի յեր, վոր Հրանուշն ամուսնացել էր զնդապետ Մայկովի հետ:

Մայկովը հաճախակի գալիս էր բանտ:

Բոլոր պատիժները կատարվում էին նրա անմիջական կարգադրութեամբ:

Սինանյանն ատում էր Մայկովին, իր նախկին կնոջ ամուսնուն

և, բանախ խցիկում նստած, չղթաչակապ ձեռքերը բռնեց անելով, դաժան դատնութեամբ սպասում էր...

Մայկովը կարճիկ, կարմիր դեմքով մի մարդ էր:

Սինայեան էր թվում, թե նրա շրթունքներից մեղը է ծորում, ժլատում էր և յերբեմն եւ շոյելով բանտարկյալներին՝ հրամայում էր նրանց կախաղան բարձրացնել:

Այդպէս էր զնդապետ Մայկովը:

Փախտն անպակաս էր նրա դեմքից. կարծես թե դա անհրաժեշտութիւն էր, ինչպէս որինակ, նրա դեմքի վրա գտնվող քիթը:

Քանդակագործը հիշում է, թե ինչպէս, Մայկովը, ձեռքերը մեջքին դրած, անցնում էր բանտի միջանցքով և բանտարկյալներին վորեւի մեկին դուրս քաշելով խցիկից, բոլորի ներկայութեամբ պատժի յեր յենթարկում:

Կար մի խիզախ ընկեր. նա բոլորովին յերիտասարդ էր:

Ջերբակալվել էր ցույցի ժամանակ:

Մայկովն իղուր էր փորձում խիզաղ յերիտասարդի բերանից խոսք դուրս քաշել:

Յերիտասարդն արհամարանքով նայում էր նրան և լուռ:

Մի անգամ զնդապետը շոյեց հաստ բխերը, ժպտաց և հրամայեց.

— Տաքացած յերկաթով այրել յերիտասարդի կուրծքը:

Այդպէս եւ արին:

Յերիտասարդը լուռ էր, նրա շրթունքներից վոչ մի խոսք, վոչ մի հառաչանք չէր լսվում:

Յերեմի առաջին անգամ խանդարվեց Մայկովի դեմքի մշտական ժպտը. նա ջղայնացաւ: Գրպանից հանեց ինչ վոր դեղի սրվակ, բամբակը թրջեց դեղով և քսեց բանտարկյալի վիրավոր կրծքին... հետո ժպտաց:

Անմիջապէս ուռաւ յերիտասարդի կուրծքը, խոցեր դուրս յեկան:

Բանտարկյալները բողոքեցին, զնդացին չղթաները, փոթորկալ

նժառն ահեղագոյ վորտապին հազարավոր բռնեցների հարվածները, Ս. Գրիգորյան. Արեւի ուժը 4:

Մորոնը իջնում էին բանտի խցիկների պատերին: Շենքը դղրդում էր:

Խիզախ յերիտասարդն, այնուամենայնիվ մնաց անկոտորում և, ափելին, մի ուժեղ ապտակ իջավ Մայկովի դեմքին:

Կատաղեց գնդապետը, նա դառնությամբ վոտքը խփեց գետնին և հրամայեց կրակարան պատրաստել ու բանտարկյալին կենդանի վիճակով նետել նրա մեջ:

— Նա ինձ ապտակեց այն օրը, յերբ իմ կինն ինձ պարգևեց առաջին արու զավակը:

... Այդ նշանակում էր, Հրանուշը, վորն արդեն մի տարի յե ինչ ապրում էր գնդապետի հետ, նոր յերեխա յեր ծնել:

Այն օրերին Սինանյանը մտածում էր, թե յերբ Մայկովը տուն գնա կպտտմի այդ դեպքի մասին, իսկ Հրանուշը նրան ողի կառաջարկի:

Մայկովը կժպտա:

... Յեվ յեկավ մի ժամանակ, յերբ Սինանյանը Մայկովի և Հրանուշի ժպիտների մեջ խիստ նմանություն գտավ:

— Յերիտասարդին կրակարանի մեջ դցել չկարողացան: Մայկովի պաշտոնակից մարդիկ նրան համոզեցին, վոր այդ բանը նոր բռնկումների առիթ կտար:

Գնդապետը գտավ մի ուրիշ հնարք (յերեմի թե այդ մտքի հղացմանը մասնակցել էր նաև Հրանուշը):

Խիզախ յերիտասարդին, բանտից տեղափոխելու պատրվակով, դուրս տարան, նրան դրին պարկի մեջ, կապկպեցին և տարան կայարան, իսկ հետո պարկը բարձրացրին շոգեքարչի վրա և մարդուն ու չաթավ անելով նետեցին գնացքի հնոցի մեջ:

Այդպես էր գնդապետը:

... Այդ նշանակում էր, վոր Հրանուշը Մայկովի համար զավակ էր ծնել:

Այդ օրից անցել են շատ տարիներ, հիմա յել, յերբ քանդակագործը հիշում է այդ ամենը, ձեռքերը բռնեցքովում են:

— Փոխվում է ծերունու մտքերի ընթացքը:

Նա հիշում է Սուրենին այնպես, ինչպես ինքը սեփական աչքերով տեսել է նրան— շատ տարիներ առաջ:

Այն օրերին Սուրենը փոքր էր, ուներ խուճուճ մագեր և հաղթով շարժում էր թույլ ու վտիտ վոտները:

Նա ժպտում էր և ասում— պա՛պա:

Գիշերները, յերբ յերեխան չէր քնում, հայրը գրկում էր նրան, սեղմում կրծքին, իսկ նա գլուխը փոքր ինչ ներքև թեքելով, մանկական անմեղ ժպիտը աչքերում ասում էր— պա՛պա:

Սինանյանը չի մոռանում այդ ամենը:

Անցել են յերկար տարիներ, հեղափոխությունը հաղթանակել է, թշնամին ստացել է վերջնական ջախջախումը, Սուրենը դարձել է կարող, ուժեղ տղամարդ. բայց ամեն անգամ, յերբ քանդակագործը մտաբերում է իր վորդու տխուր մանկությունը սիրտը ճմլվում է:

Նույն այդ մտածումների պահին, մեկը մոտենում է քանդակագործին և ձեռքը դնում նրա լայն ճակատին,— հայրիկ, ի՞նչպես ես:

Սուրենն է, նա յեկել է հոր վրա յեղած փոփոխությունները տեսնելու:

— Արդյո՞ք կլավանա նա, հաջողություն կունենա՞ն:

Ծերունին վորդու ներկայությունը զգալով, ժպտում է: Հիմնական հոգային խաղաղ լուծթյան մեջ հնչում է քանդակագործի խոսքը:

— Մո՛տ նստի՛ր, զավակս:

Սուրենը սպասում է հոր խոսքին, իսկ նա շարունակում է լռել: Հայր ու վորդի հասկանում են իրար:

Լուծթյունը յերկար է տևում:

Ծերունու մտքերը նոր ընթացք են ստացել: Նրա դեմքը և շրթթունքները վողողում է մի արտահայտիչ ժպիտ:

Այս անգամ արդեն ծերունին վերապրում է մի պայծառ, անմահ առաջի հուշ:

— Ի՞նչ հիշեցիր, հայրիկ,— հարցնում է Սուրենը:

— Նրան, իմ առաջին հանգիստումը ընկեք Սոսոյի հետ:

Սուրենը դիտե, վոր հորը չպետք է խանդարել, նա սպասում է:

Հետաքրքրութիւնը նրան օտիպում է հարց տալ, ոակայն դիտե-
նալով հոր բնավորութիւնը, սպասում է, իսկ հայրը վերմակի տա-
կից հանելով ձեռքը բռնում է վորդու աջը և պատմում.

— Անցել են յերկար տարիներ, յես հիմա յիւ պատկերացնում եմ
ընկեր Ստալինին այն ժամանակ: Ահա հիշում եմ:

— Այդ որն անձրեւի էր յեկել, մենք գնում էինք ժողովատեղ:
Յեխոտ ճանապարհով անցնում էինք առաջ:

Քիչ էյինք, ընդամենը մի վորքրիկ խումբ, մենք հագել էինք, ա-
վելի ճիշտ մեր վրա էյինք գցել. կնոջ չադրաներ:

Չադրայով էինք ժողովատեղի գնում այն պատճառով, վորպէսզի
Աբայի (այն մարդու, վորի տունը մենք հավաքվում էինք) հարեւան-
ները և խուզարկու վոստիկանութիւնը չկասկածէին մեր ո՞վ լի-
նելը:*)

Չադրաները վրաներս մենք մոտենում էինք ծերունու բնակարա-
նին: Դռանը չհասած, յես սայթաքեցի: Այն է վայր էյի ընկնում, յերբ
մի ուժեղ ձեռք բռնեց իմ թեւից, յես չադրան դեմքիցս հետ տարա և
նայեցի ինձ ողնող մարդուն:

Իմ կողքին կանգնած տեսա նրան, վորին առաջին անգամ հանդի-
պել էյի բանաստեղծ բարեկամիս Վլադիմիր Կուզնեցովին կախաղան
բարձրանալու որը կազմակերպված բողոքի ցույցի ժամանակ:

Իմ կողքին կանգնած էր նա, սևահեր յերիտասարդը, ընկեր Սոսոն:

Յես ուզեցի խոսել, իսկ նա զգուշացրեց շտապել և առաջ անցավ:

Մտնելով Աբայի բնակարանը, աստիճաններով իջանք ներքնհարկ,
ինձ առաջնորդում էր ընկեր Սեթը, — դու յերեւի, թե նրան հիշում
ես:

— Յես նկատեցի, վոր մեզանից բացի այնտեղ կային նաև ուրիշ
շատ ընկերներ:

Առաջին անգամն էյի լինում այնտեղ, յես մոտիկից, օեփական
աչքերով, տեսա ընկեր Սոսոյին: Սեթը, վոր նախորդ խոստացել էր

*) Հիշել «Ստալինը և Հալիմը»:

ինձ ծանոթացնել ընկեր Ստալինի հետ, ժողովի վերջում արդեաւ ել
արեց:

Այսօրվա պես հիշում եմ, ընկեր Ստալինը նստած էր հացած
աթոռի վրա, արմունկներով հենվել էր սեղանին և խմբադրում էր
այն թուուցիկները, վորոնք պետք է տարածվէին մի քանի լեզու-
ներով:

Նա խիստ զբաղված էր, սակայն, յերբ մոտեցանք, գլուխը վեր
բարձրացեց, նայեց Սեթին, ժպտաց, իսկ հետո ձեռքը մեկնելով ինձ,
հին ծանոթի նման բարեւեց:

... Դու հասկանում ես, նա ինքը...

— Մենք ծանոթացանք:

Նա այնքան հարազատ էր, այնքան ջերմ:

Յերկար խոսեցինք: Հարցեր էր տալիս և յես զգում էյի, վոր նա
ինձանից հարցնում էր այն ամենի մասին ինչ հետաքրքրում էր և ա-
սում էր այն ինչ անհրաժեշտ էր ինձ:

Կարծես, թե խոսում էյի վաղուցվա ծանոթիս, հաբաղատիս հետ:

Յեւ ալդպես էր:

Նա, դեռ այն որերին, խոսում էր պրոլետարական արվեստի մա-
սին, մոնումենտալ պատմության — հուշարձանների մասին (խոսքն
ի հարկէ հեղափոխության համար ընկած ընկերների հուշարձաններ
ստեղծելու հարցի առթիւ էր): Ընկեր Սոսոն, մեր խոսակցության
վերջում, վորք ինչ կկոցելով խորաթափանց աչքերը, ժպտաց և հարց-
րեց — իսկ դու, ընկեր քանդակադործ, կանաչեղին ծախել գիտե՞ս,
դա հարկավոր է, դա առայժմ անհրաժեշտ է:

Նա ժպտում էր:

Մենք այն ժամանակ թուուցիկները տարածում էինք այնպես, վոր
չկասկածէին, դրա համար ել թուուցիկների փաթեթը զամբյուղի մեջ
դնելով վրան կանաչի էյինք գնում և կանաչ ծախողի պատրվակով
մտնում մարդաշատ վայրերը և գնում այնտեղ ուր անհրաժեշտ էր:

Դա անլեզալ ուղիտառանքի ձեղերից մեկն էր:

Յեւ, ի հարկէ, հայտնեցի թանկագին Մուսոյին, վոր ինձանից գուրա

կղտ առաջին տեսակի կանաչ ծախող:

Յեւ այսօրվա պես հիշում եմ, ընկեր Ստալինը, հայերեն լեզվով
ասաց. — լավ:

Նա թեթեւակի խիեց ուսիս, ժպտաց, ապա ծխամորճից գուրս
թողնելով ծխի քուլաները, նայեց Սեթին և տվեց մի քանի պատմե-
րա կրկին սեղմեց ձեռքերս:

... Շուտով ինձ ձերբակալեցին:

Նրան, ընկեր Ստալինին մի անգամ ել հանդիպեցի մի ուրիշ քա-
ղաքում:

Ձե վոր ինձ անընդհատ տեղափոխում էյին բանտից աքսոր, աքսո-
րից բանտ:

Ինձ և շատ ուրիշ ընկերների տանում էյին աքսոր:

Մենք չղթալակալ էյինք: Ձրնգում էյին շղթաները, լազ մենք
քայլում էյինք դանդաղ, բայց վստահ, հաստատակամ, գիտեյինք,
վոր մեր տանջանքը ապագայի համար անհրաժեշտ է, վերջնական
հաղթանակի համար—կարեւոր:

Շարժվում էյինք առաջ և հանկարծ, մեր գլխավերեվը, վորպես
հրեղեն կանչ, տարածվեց մի ձայն:

Յետ նայեցինք և նկատեցինք ընկեր Սոսոյին:

Բանտի լուսամուտից յերեվում եր նրա փոքր ինչ մագակալած
դեմքը:

Հաղթական բաղուկը պարզել եր առաջ:

Նա ուղղակի ասաց. — ընկերներ, ամուր մնացեք, լավ պահեցեք
ձեզ կաշկանդող շղթաները: Նրանք մի որ պետք կդան:

Սինանյանը լռեց, Սուրենը նայում եր նրան:

Նա, ի հարկե, լսել եր այս պատմությունը, սակայն հիացած,
զմայլված սպասում եր, ծերունին լուռ եր:

Յերկար լռությունից հետո միայն, նա կրկին ժպտաց և ուղղակի
ասաց— այո, պետք յեկան...

— Հա', լավ հիշում եմ ընկեր Սոսոյին, մի անգամ ել տեսա, այն
ժամանակ, յերբ ցույցի յելած բանվորներին կուլի յեր առաջ-
նացողում, յեւ նայում էյի, բանտի լուսամուտից յերեվում եր Սիբելի
Սոսոյի նվիրական շարժը, վորի ծայրը փողփողում եր:

Դրանից հետո յեւ նրան չեմ տեսել:

Ֆարական Ժանդարմերիան ինձ գրկեց աչքերից:

— Սուրեն, զափակս, մեծ Ստալինի մասին, հետագայում յես
դեցի շատ հերոսական և վսեմ պատմություններ:

Մարդկության հանճարներ Լենինը և Ստալինը մեր կյանքը դարձ-
րին լուսեղեն:

Մեծ Ստալինը մեզ համար յերջանկություն ստեղծեց:

— Յեւ մտածում եմ, թե աչքի լույս ստանամ, կարո՞ղ եմ արդյոք
ճանաչել նրան, չե՞ վոր մեր հանդիպումից անցել են քանի՞, քանի՞
առարկներ...

— Այո, կարող եմ, յես վոչ վոքի այնքան պարզ ու պայծառ չեմ
պատկերացնում, ինչպես նրան:

Լսի՛ր Սուրեն, յերբ տեսնել կարողանամ, առաջին դործս կլինի...

Բայց այդ մասին հետո:

— Ի՞նչ կլինի, խնդրում եմ ասա', հայրիկ:

— Կասեմ, կտեսնես, յեթե առողջանամ:

Որեր և ամիսներ հաջորդեցին իրար, դաշտերում չղարշվեց զարու-
շին և մի նոր դարուն ել յեկալ:

Քանդակագործը վերջնականապես ... բուժվել էր:

Սուրեն Սինանյանի անունը հնչեց հողագնդի բոլոր կողմերում:
Քանդակագործը տեսնում էր, նա գոհ էր իր վիճակից, նա աչքի
լույս ստացավ:

Միության և աշխարհի բոլոր կողմերից նամակներ եյին գալիս
Սուրենին և Անդրեյին:

Նամակների վրա ուղղակի գրվում էյին՝ աչքի ինժեներներին,
աչք ստեղծողներին:

Պակասում էր կույրերի թիվը:

* * *

Մինչ այս, մինչ այն, կատարվեց սպիտակ տունը կրակի մատնող
մարդու դատը:

Դատարանը սպասում էր, քիչ հետո կգար մեղադրյալը: Նա, ով
այրել էր սպիտակ տունը:

Դատաւարութեանը, ինչ խոփ, ներկա էյին նաև Սուրենը,
Անդրեյը, Ուզան և ծերունի քանդակագործը:

Ներս բերին մեղադրյալին:

Նա սպիտակ մագերով մի կին էր:

Ծերունի քանդակագործը զարմացած նայում էր նրան:

Յերկար դիտելուց հետո, նա վերջնականապես ճանաչեց... Չէ՞,
վոր մեղադրյալը նա յիր...

Սինանյանը վեր կացավ տեղից և մոտեցավ մեղադրյալի աթոռին
նստած կնոջը:

Կինը տեսավ ծերունիին... Քանի մի բույս ապշած նայեց նրան, ա-
պա գլուխը կախեց:

Դահլիճում նստած մարդիկ, ապա և դատաւորները զարմացած
նայում էյին, դատաւորը հնչեցրեց զանգը... Իսկ Գուրգեն Սինանյա-
նը ցույց տուց մեղադրական աթոռին նստած կնոջը, ասաց.

— Լսեցե՛ք, ընկերներ— սա, իմ կինն է, Հրանուշն է, նա ով
միացավ իր հորը և ինձ զրկեց աչքի լույսից, նա, ով այրել է սպիտակ
տունը:

Բոլորին ել հայտնի դարձավ, վոր մեղադրյալը՝ Հրանուշը, սպի-
տակ տան տեխնիկական աշխատողի զրուցակիցն էր՝ Արինա Ստեփա-
նովնան:

Իր իսկական կերպարանքը փոխած այն պառավը, վորն այնքան
սիրով լուծ էր սպիտակ տան տեխնիկական աշխատողին՝ Նատալյա-
Դավրիժովնային:

Յերկար տարիներ անհայտութեան մեջ մնալուց հետո, Հրանուշն
այդ կերպ էր հայտնվել իր նախկին ընտանիքին:

... Այդպիսի բաներ քիչ չեն պատահում այս մեծ աշխարհում:

Սուրենը վտռի յեկալ, նրա դեմ կանգնած էր դավաճան մայրը:

Անդրեյը ցնցվեց— չէ՞ վոր այնտեղ էր նա... Կույր մարդուն բո-
լորովին նոր աչք պարգևելու պլաններն այրողը...

Հրանուշը տարիներ հետո, ծերութեան օրերին, նստած էր վարդու
և ամուսնու դեմ, վորպես մեղադրյալ, սպիտակ մագերով:

Նա պատմեց այն մասին, վոր ինքը սպիտակ տունն այրելու համար
գործուղված է յեղել հակահեղափոխական խմբակի կողմից, իսկ այդ
խմբակն արդեն բռնված է:

Պարզվեց, վոր Հրանուշը տարիներ շարունակ յեղել է լրտես:

Նա լրտեսական խմբի մեջ է մտել Գուրգենին ժանդարմերիայի
ձեռքը հանձնելուց հետո, յերկրորդ ամուսնու՝ Մայկովի միջոցով:

(Մայկովը, խորհրդայնացումից հետո, վոչնչացվեց Ժողովրդի
կողմից):

— Ինքը, պառավը, գուցե թե, խզահաբություն առաջացնելու
համար, ասաց, — ինձ ուղարկեցին սպիտակ տունն այրելու, յես է
հարկե, վախեցա, աշխատեցի հրաժարվել:

Ինձ համար դժվար էր նորից հանդիպել վորդուս:

(Վո՛րդի— դահլիճում հեղնանքի ծիծաղ բարձրացավ):

— Սակայն վորոշված էր, յես կատարեցի... այրեցի:

Ճիշտն ասած, ինքս ել շահագործված էյի, յեթե Սինանյանը տե-
նելու կարողութեան ունենար, պարզ է, կստատվեր իմ դիմակը:

Դահլիճը լեւի յեցուն էր մտրդկանցով:

Հրանուշին նայելիս մարդիկ զղվանք էյին զգում, ատելութեանը
բոցավառվում էր մարդկանց աչքերում:

* * *

Բժշկվելուց հետո, քանդակագործը ձեռնամուխ յեղավ ասորիների
յերազի իրադրոժմանը:

Գուրգեն Սինանյանին, յերկարատար դրերի ուժգնութեամբ, կրկին
այրում էր ասեղծագործութեան կրակից:

Տարիների լուծմիջումից հետո, նորից վերցրեց մուրճ ու բրնձ:

Մասով աշխատասենյակ, այնտեղ դրված էր գրանիտի հսկայական մի հատր: Դուռը ծածկեց:

Դրո՞ւմ արեւի շողերն էյին բեկ-բեկվում:

Գուրգեն Սինանյանը քանդակում էր... Տարիների, որերի, անհուն ծարավի կարոտով...

Ամիսներ, տարի անցավ, ծերունին դուրս չէր գալիս:

Նա արդեն վերջացրել էր, արձանը պատրաստ էր:

Բարեկամները և ընկերները յեկել էյին վաստակավոր քանդակա-դարձի վերջին գործը տեսնելու, ծերունին արձանի վրայից վերցրեց ծածկոցը:

Սիրո և յերախտագիտության ուժը բոցավառվեց մարդկանց սրբ-տուն:

Պատվանդանի վրա կանգնած էր նա, զինվորական վերարկույի վեշը յետ գցած, սապոդներով, փոքր ինչ խստադեմ, սակայն աչքերում հավերժափայլ ժպիտ... Ահա նա, ինքը— իմաստությունը...

Պատվանդանին կանգնած էր նա— աշխարհի մարդկության սիր-տը:

Նրա լիքը, ամրակուռ կրծքում ամբարվել է ժողովրդի անսլացու-ղի ուժը, ահա նա, վորը մեր վսեմ պայքարի հաղթական դրոշմ է: Ահա նա, վորը աշխարհը տանում է դեպի արև, դեպի լուսապայծառ ա-պագան:

Մարդիկ դիտում էյին հիացած, սիրավատ. արձանի տակ պարզ տառերով գրված էր.

Ս Տ Ա Լ Ի Ն:

Սուբենին թվում էր, թե նորից, ինչպես շատ տարիներ առաջ, անփական ականջներով լսում և հրաշալի սրտի զարկերը:

Վաստակած, ժպիտը դեմքին, բազկաթուռի վրա նստած էր ծերունի քանդակագործը: Նրան չըջապատել էյին հարազատներն ու ընկերները:

— Յես վերջնականապես յերջանիկ եմ,— ասաց ծերունին և ավե-լացրեց—բարեկամներս, կատարվեց տարիների յերազս, քանդակեցի նրա արձանը, ով իմ խորտակված կյանքին վուր ներշնչեց, ճիշտ ուղղություն տվեց, ով լույս է տալիս կույրերին, ով ստեղծել է այն, ինչ կա և ստեղծում է այն, ինչ պիտի լինի: Նա փրկեց, նա կրկին... Նա կյանքին տվեց իսկական արևի ուժը...

Լուեց ծերունին...

Սուբենը նայում էր հորը... նա մտաբերում էր մի ամբողջ կյանքի պատմություն և իր չթունքներին էր մոտեցնում հոր ծերունական շնորհը...

ՆԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Կվեթիսանսար այս պատմությունը և այլևս դրելու կարիք չեք լինի, յեթե մի քանի որ առաջ ստացած չլինեյի Անդրեյ Սերգեյեվիչի, ինձ հասցեաղարված, նամակը (չե՞ վոր մենք բարեկամներ ենք):

Յերիասասարդ, անվանի ակնարուժը ինձ հայտնում է, վոր իրեն և Սուբենին հաջողվեց նորից գտնել այն, ինչ կորսվել էր սպիտակ ասն ալրվելու ժամանակ:

Նշանակում է հնարավոր է լույս չնորհել բոլոր կույրերին:

Հնարավոր է վոչ միայն փոխել աչքի փչացած բերը (ինչպես այդ արվեց ծերունու նկատմամբ) այլ ամբողջ աչքը...

Այդ նշանակում է, աշխարհի վրա կույրեր չեն լինի... կրուժվեն բոլորը...

Այս տողերը վերջացնելու հնարավորություն չունեմ, վորովհետև հենց նոր ներս մտավ մայրս և ասաց, վոր Անդրեյ Սերգեյեվիչից ինձ յեկել է մի նամակ ևս...

Ահա բանում եմ այդ նամակը... տեսնե՞ք ինչ նորություններ և հաղորդում գիտնական բարեկամս:

Թե ինչ կկատարվի հետագայում, սիրելի՛ ընթերցող, կգրեմ աս-տանձին:

1937 թ. մայիս, Ժեկեզնովոգոկ.

Սիրուն և ամենից հոտովեան և այն յերկրի վարդը, վորի գովքն և արել աշուղ Շոլային: Սառնորակ ու անմահական են այդ յերկրի ջրերը, վորոհետեւ նրանց կարկաչի մեջ դեռ հնչում է Շոլայի յերգի ձայնը: Բարձր են և աստղերին են հասնում այդ յերկրի լեռները, և իր հայրենի լեռների նման վսեմ եր Շոլային:

Նա Հայտնի Հասանի վորդին եր...

Հասանը սուր և բարձրացրել թագավորի դեմ:

Նա իր յերկաթե կռներով պաշտպանել և հողի մարդուն, իսկ թագավորին ահ ու սարսափ և տվել: Անվախ արծվի նման բարձրացել և լեռնազաղաթները, անցել ծերպերով, իշխել անտառներին և թագավորին թվացել է, թե անսառի ամեն մի ծառի տակ մի մարդ է կանդ-նած հրացանը ձեռին:

Այդպես քաջ ու հզոր եր Հասանը ու դրա համար ել լեռնաստանի սրինգները նրա գովքն ելին անում, յերգում նրա քաջադործութունները մեծ:

Ձորք է կապել թագավորն ու յեկել է... Այրված անտառների բոցը կռանին և հասել, մեծ ճանապարհների և կեռման ուղիների վրա կախ-ված մարդկանց անշուշտ մարմինն և որորվել, մինչև վոր բռնել են քաջ Հասանին:

Ազատ սարերի սրինգը վշտի արցունքներ և թափել, յերբ Հասանն, այդ քաջ տղամարդը, չղթայակապ և արվել: Պարաններով կապել են նաև նրա կնոջը, իսկ յերեսներին՝ վորդի Շոլային գերել են: Սի-րելի գավակին թշնամու գերկը տեսնելով, արցունք և թափել Հասանի կինը և ընկել և ուշադնաց:

— Մի լար, Ձեյնար,—ասել և չղթայակապ մարդը,—յեթե մեր գավակը հալալ կաթ և կերել, նրանց մոտ ել դաշույնը արած կտահի:

— Ի՞նչ, ասացիր,—գոռացել և թագավորը:

— Ասացի ելի,—գառնացած շեշտել և Հասանը:

— Կրկնի՛ր:

— Լա՛վ,—մոնչացել և չղթայակապը,—գե, դու, վոր թագավոր ես, լավ նայիր այս սայլին: Խ՞ո տեսար...

— Հե՛տո:

— Հետո ու քեզ քա՛ր.— խո տեսնում ես, անիվը. նոր և պատ-րաստված հմուտ վարպետի կողմից: Յերկաթե սղակը վարպետը տա-քացրել, լայնացրել ու նոր միայն հաղցրել և անիվին: Իսկ հիմա, նը-րանք ամուր գրկել են իրար, վորո՞քի անջատել— չի լինի: Անիվը պետք և ճանապարհ կտրի, անցնի լեռներով, կեռման ճանապարհնե-րով, սարերը բարձրանա ու նոր միայն կթաղանա՝ կնկնի յերկաթե-

ողակը: Սաղաթն վարպետը պատրաստ կունենա նոր անիվ: Հիմա հա-կացար:

— Ի՞նչ ես ուղում ասել, ավաղակ:

— Հա՛, հա՛,—Միծաղել և Հասանը.— իդուր չէ, վոր թագավոր ես, գիտե՞յի, չե՞յի հասկանա. ահա պարզը կասեմ— այո վորդիկ աղան, վորին խլեցիր մեկանից, հոր տղան է՝ խեղճերին վատնատակ անողների գլուխը թոցնող Հասանի վորդին, ուրեմն գիտցիր, տղա-ն կանի այն ինչ յես եյի անում և յեթե նրան ել սպանես նորերը կզան:

Ձեն թողել, վոր չղթայակապն ավարտի վերջին խոսքերը. կարկը-տարեր ամպի պես գոռացել և թագավորն ու հրամայել— ծնողների ներկայութեամբ հանել վորդի Շոլայի աչքերը: Կանաչների վրա թիրտացել և մանուկը, աչքերի բներից արյունն և ժայթքել ու ցավից ճանկոել և լեռ-ապառաժները: Հասանը գարարվել և վորդու կսկից, ճքճքացել են նրան կաշկանդող չղթաները: Մոնչացել և, բայց թագա-վորը տվել և յերկրորդ հրամանը.— իսկ ավաղակին և կնոջը կապեցեք սայլի յետովից, խենթ ձիեր լծեք, գցեք լեռները, թող մաշվեն, թող ջարդվեն անիվները, թող անիվ չլինի... Վորք ու կույր և մնացել Հա-սանի վորդին՝ Շոլային: Բարձրագահ սարերի բարի մարդիկ նրան հաց, քնելու տեղ են տվել, բայց այն ինչ խլի եր թագավորը, վոր վրք վերադարձնել չի կարողացել: Փոքրիկը չըջել և առանց աչքերի, աչքերի տեղ՝ յերկու խոր ու սեւ խոռոչներ: Կույր մանուկը նստել և ժայռերի վրա, դեմքը դարձրել դահավիժ ջրերին ու լսել սեզ սարերի սրնդի տնքոցը:

Յեվ մեծացել և նա, դարձել աշուղ:

Դեռ նոր եր բոլորել քսան տարին, յերբ կույրի համբավը տարած-վեց աշխարհով մեկ: Պապակած չրթունքներով, նրան լսելու համար յեկան Հինդից ու Ձինից, յեկան Ռուստ յերկրից, Ինդիլիսից յեկան ու հողադնդի բոլոր ծայրերից: Շոլայի յերգը քարերին անգամ շունչ ու սիրտ եր տալիս: Անողորմ բազեն թողնում եր իր վորսը, յերբ ականջն եր ընկնում աշուղի սազի ձայնը ու սարերն ել, ասես, հալվում, խո-նարհվում ելին:

Սիրահար սրտերի, վորքը մնացած մանուկների սրտի սիրելին եր նա:

... Ու մի անգամ, յերբ գետի ափին, ծառի տակ, նստած աշուղը խախտ եր սազի լարերին և բլբլբլ սիրտ գովքն եր անում, լավում և հողվյունը ջրերի, խխլում են խոտերը մատաղ և կարծես գետի ակուն-քից յեկած, Շոլայի առջև չոքում և սպիտակ շորերը հագած, մի չքնաղ աղջիկ: Դեռ յերգում եր աշուղը, թողող հավքերն եր վար բերում և օձերին անգամ դուբա եր քաշում բներից, յերբ լավում և աղջկա ձայնը.

— Վա՛ղուդ, չատ վա՛ղուց սաղաղ ձայնն եմ լսել, սիրո յերգը տա

այրվել եմ... Ահա յեկել եմ... դոնե մի անգամ խոսիք, նայիր, ասեմեմ...

Աղջիկը ձեռքերը դրել է Շուլայի ծնկին: Սպասել: Լուսթյունն է չլի: Արձանի նման քարացել է աշուղը: Աղջիկը խոսել է նորից ու նորից, խնդրել է չարհամարել՝ հանուն բնության, հանուն սիրո...:

Յեւ Շուլային գլուխը բարձրացրել է... նայել աղջկանն, աղջիկը յետ է քաշվել, հենվել ժայռերին, բռնել խոտերից ու ճչացել է սար-նափահար, ոգնություն խնդրել և փախել է: Նրան վախեցրել են աշուղի տարրորինակ աչքերը:

Յեւ պատմում են, թե մինչև վերջն էլ աղջիկը կարոտ է մնացել աշուղին:

Շուլային յեղել է նաև հողի մարդու ըմբոստության յերգիչը:

... Ու այնպես է յեղել, վոր գյուղ է յեկել բեկի դարում թուլեն: Ոձի նման Ֆլաացել է փողոցներով, այրել է խեղճերի տները, թքել մարդկանց յերեսին և բլի նման սուր բեխերը չոյել՝ աչքերի մեջ հեղ-նանք ու չարություն: Հետո ձեռները մեջքին, մտել է տները յեւ ում աղջկան, վոր հավանել է, տարել է: Մայրերն ընկել են գետին, հո-ղը լիցել, իսկ բեկի տղան մնացել է անկողնում: Չալում է յեղել նա-գյուղացու յեղը սրի մի հարվածով գլորել է գետին ու չարել շամփուր-ների վրա: Զեռքը ծոցում մղկատացել է գյուղացին:

Յեւ վշտից դադարած, բեկի թուլից անպատված հավաքվել են մարդիկ, յեկել աշուղ Շուլայի մոտ, իսկ Շուլային յերգել է սիրտը արե-վի պես բացած ու վրեժ բորբոքել ըմբոստների սրտերում:

... Յեւ այդ գիշեր, հեռանալով աշուղի մոտից, հողի մարդը նա-յել է վրեժի ուժից փայլ-փլուղ դաշույնին ու մտել է բեկի տունը, կտրել նրա գլուխը, արյունով լվացել կոշտ ձեռքերը... մաքրել վշտի ու տառապանքի ժանգը:

Ովկյանի նման խորը և յերկնի նման բարձր է յեղել աշուղի յեր-գը:

Հոգով փառավորվել է հողի մարդը ու գոհ է մնացել աշուղը, բայց բախտավորությունը յերկար չի տևել:

— Բերեք ինձ մոտ Շուլային: Նա կամ իմ գովքը պիտի անի և կամ...

Այսպես է հրամայել թագավորը: Յեւ նրա մարդիկ գնացել են ա-շուղի յետեւից, բայց դատարկաձեռն յետ յեկել: Ժողովուրդն իր ա-շուղին չի տվել:

Փրփրել է թագավորը և գիշերով, թագավորի մարդիկ, գաղտագո-ղի հարձակվել են այն տան վրա, վորտեղ յերգում էր Շուլային ու բռնել են նրան, տարել պալատ: Թագավորը հրավիրել է իր յերգիչնե-րին, հեռավոր յերկրներից թագավորներ են յեկել, վորպեսզի լսեն Ֆյուլստանի բուլբուլ Շուլային:

— Շուլայի, — հրամայել է թագավորը, — դու վոր մեծ ես, քան իմ

յերկրի ամենամեծ աշուղը և դու, վոր Գյուլստանի բուլբուլ ասեմեն ես վաստակել, յերգիր ինձ համար մի յերգ, վորը մինչև հիմա լսած չլինեմ, իմ աշուղներից և վոչ մեկը հնչեցրած չլինի, յեթե կատարե-ցիր՝ լավ, իսկ յեթե վոչ՝ դահիճը թող պատրաստ լինի: Ահա՛, պա-ման եմ դնում, յեթե կատարեցիր՝ լավ, կներեմ, իսկ յեթե վոչ՝ կույց ես, բայց մահը տեսնել կարող ես: Հասկացար:

Սպասել են: Լուսթյամբ, կարծես, տնքացել են պատերից կախված գեները՝ սեվափող ու սպառնազին:

Չար ու քեռախնդիր նայել են պալատական աշուղներն ու դողդո-ղացել իրենց սաղի լարերի պես: Շուլային սպասել է գլխահակ...

Ջրերն են կաթել վերջին անգամ ու լռել վոսկե վազերում, բլբու-լի յերգն է մնացել կոկորդի մեջ և քամին անգամ դադարել է շնչանկալ...

Սպասել են:

Յեւ յերկար է մտածել աշուղը:

Ու դարձել, ասել է. — Թագավորն ինձանից պահանջել է իր համար չլույսած մի յերգ: Նրա աշուղները, վորոնք յեկել են հողադնդի այս ծայրից չըջել ու կրկին հասել նույնտեղը և գլխներին սպիտակ մազն է փորձի ու իմաստության, յես նրանց մոտ ի՞նչ պետք է յերգեմ, վոր նրանք արդեն յերգած չլինեն:

Թող ների, ուրեմն, մեծն թագավորը...

Հեզնանքն է ծուկ թագավորի լայնաբերան շրթունքների անկյունե-րը: Նա սրել է բեխերն ու մոնչացել. — վո՛չ, հրամանս՝ հրա-ման է:

Լռել է աշուղը և հանկարծ, վոնց վոր կես գիշերին կրակ բանա-լավ. — պատասխանել է նա, իսկ աչքերի խոռոչները լցվել են ատելու-թյան թույն ու կրակով: Թափով խիել է սաղին, ահագնորեն դողդո-ղացել են լարերը սարսուռ պատելով մարդկանց ու թագավորին:

Յեւ այսպես է յերգել Շուլային.

— Դեռ փոքր եյի, աչքերս հանիք թագավոր,

— Աչքերդ յեղնեն, դահիճ ու չար թագավոր:

— Հայրս հողը, դու՝ մի ճիճու նենգավոր՝

Դավ լարեցիր, սպանեցիր, թագավոր:

Կեղնեն չուտով հողի մարդիկ, հազար — հազար,

Կառնեն յեղան, սրեր կառնեն, հազար հազար,

Վրեժ կուզեն ընկածների հազար — հազար,

Կյանքի գինը մեր հայրերի հազար — հազար:

Կույրեր կուգան, թունով լեցուն հազար — հազար,

Լաւար կուզեն արևների հազար — հազար,

Վոր կտրել ևս զար ու զարեր հազար— հազար,
նեղճ ու նոթի ժողովրդից հազար— հազար:

Յեւ Շոլան ևմ, Հասանողլի, թաղավոր,
Յերգ եռ ուղում զեռ չլաված, թաղավոր,
Ահա կասեմ, անվախ կասեմ, նենդավոր,
Շուտով պիտի մահդ լինի, թաղավոր:

Յերգը կիսատ և մնացել. կարմիր կարան հաղած դահլիճը սրի մ
հարվածով կտրել և Շոլայի գլուխը: Պալատից լսվել և կանացի մի ճի
և հայտնել են թաղավորին, վոր նրա աղջիկը ինքնասպան և յեղել
Դա այն գեղեցկուհին էր, վորը սիրելով Շոլային, սարսափել էր նր
կույր աչքերից... փախել:

Թաղավորը նայել և աշուղի դիակին և գունատվել:

Նա լսել և պալատի դռներին հասնող ժողովրդի ձայնը, վորն ամ
բարտաղը բացած ջրի նման, հուններից դուրս յեկած ծովերի ահագնո
թյամբ, վրեժի թույնով լցված, յեկել պահանջել և իր աշուղին՝ Գյու
սանի բուլբուլին, կոխներն ու ըմբոստության յերգչին, Շոլայի
վորի կտրած գլուխն ընկած էր գորգի վրա և հանած աչքերի սեւ խ
ռչները նայում էին դողդողացող թաղավորին:

...Դարեր են անցել և մինչև հիմա յեւ պատմում են թե՛ սիրուն ո
ամենից հոտավետն և Շոլայի հայրենիքի վարդը, վորովհետեւ նր
գովքն և արել Գյուլստանի բլբուլը: Սառնորակ ու անմահական
նրա հայրենի յերկրի ջրերը, վորովհետեւ նրանց կարկաչի մեջ
հնչում և Շոլայի յերգի ձայնը. աստղերին են հասնում և բարձր
այդ յերկրի լեռները, վորովհետեւ նրանց նման վեհ ու ըմբոստ
յեղել աշուղ Շոլային:

1035 Բ.



ՀՀ Ազգային գրադարան



NL 0338181

26121

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՊԱՏԻՍԹԱՆԻ

ԱՐԱՄ ԳՐԻԳՐՅԱՆ
„ՏԻԼԱ ՏՈԼՈՐԻ“